Azg
Azg
Armenian daily

13 ԱՊՐԻԼ 1996. ՇԱԲԱԹ # 70 (1076)

ՀՀ նախագահի դաստախան ուղերձը հանձնվեց Թուրքիայի նախագահին

ԵՐԵՎԱՆ, 12 ԱՊՐԻԼ, ԱՐՄԵՆՊՐԵՍ-ՀՀ ԱԼՈՒՍԳԱԼԻ ՄԱՍՈՒՆԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ. ՀՀ նախագահի գլխավոր խորհրդական ժիրայր Լիոյահիբյանն Անկարայում հանդիպումներ է ունեցել Թուրքիայի նախագահ Սուլեյման Դեմիրելի եւ վարչապետ Մեսուտ Յըլմազի հետ: ժիրայր Լիոյահիբյանը Սուլեյման Դեմիրելին է հանձնել նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի դաստախան ուղերձը: Վարչապետ Յըլմազի հետ հանդիպմանը մասնակցել է Թուրքիայի արտգործնախարար Տանսու Չիլլերը:

Կրկին ձերբակալված է Այազ Մութալիբովը

12 ԱՊՐԻԼ, «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ». Անցյալ գիշեր Մոսկվայում ձերբակալվեց Ադրբեջանի նախկին նախագահ Այազ Մութալիբովը: Մութալիբովն Ադրբեջանի կողմից մեղադրվում է դեպեական հեղաշրջում կատարելու փորձի մեջ: Ռադիոկայանի թղթակցին Մութալիբովի կինը Ադելին ասել է, որ իր ամուսնուն ձերբակալել է Մոսկվայի ոստիկանությունը: Այլ մանրամասնություններ հայտնի չեն: Մութալիբովն անցյալ տարի եւս ձերբակալվել էր ռուսների կողմից, որոնք ցանկանում էին նրան հանձնել Բաքվի իշխանություններին, սակայն այդ հայլին չկարողացան այն ժամանակ դիմել, խուսանավելով համադասախան արտոնագիր գլխավոր դաստախանի գրասենյակից:

ՄՈՍԿՎԱ

ԱՊՀ երկրների գործակցությունն ավելի համակարգված է դառնում

ՄՈՍԿՎԱ, 12 ԱՊՐԻԼ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ինչպես Մոսկվայից հաղորդել է Արմենպրեսի սեփական թղթակիցը, այսօր տեղի է ունեցել ԱՊՀ երկրների վարչապետների խորհրդի հերթական նիստը, որին մասնակցել է նաեւ Հայաստանի դաստվիրակությունը՝ վարչապետ Հրանտ Բագրատյանի գլխավորությամբ:

Բացելով այն, Ռուսաստանի վարչապետ Վիկտոր Չեռնոմիրդինը նշել է, որ ԱՊՀ երկրների համագործակցությունն ավելի ու ավելի համակարգված է դառնում, իսկ անդամ երկրների ազգային եւ միջազգային մարմիններն անհրաժեշտ փորձ են ձեռք բերել եւ զգալիորեն մեծացրել են իրենց գործունեության հատույցը:

ԱՊՀ կառավարությունների ղեկավարների խորհուրդը հավանություն է տվել 1996-97 թվականներին ԱՊՀ անդամ երկրների ինտեգրացիոն գործընթացների հեռանկարային ծրագրին: Հեռանկարային ծրագիրը ներառում է սոցիալ-տնտեսական, ռազմական եւ արտաքին քաղաքական ոլորտներում ԱՊՀ անդամ երկրների համագործակցության զարգացման համալիր միջոցառումներ առաջիկա 1,5 տարվա համար:

Խորհրդի նիստում ընդունվել է նաեւ Համագործակցության երկրների հակաօդային պաշտպանության միացյալ համակարգի ստեղծման եւ կատարելագործման նորմատիվ փաստաթղթերի փաթեթ, ստորագրվել է համաձայնագիր գլխավոր խողովակաշարերով նավթի եւ նավթամթերքների տարանցման բնագավառում համաձայնեցված քաղաքականություն վարելու մասին: Կառավարությունների ղեկավարների խորհուրդը հաստատել է նաեւ մինչեւ 2000 թվականն ընկած ժամանակաշրջանում Համագործակցության անդամ երկրների տարածքում կազմակերպված հանցագործության դեմ պայքարի միջոցառման ծրագիրը, ինչպես նաեւ տնտեսական բնույթի հանցագործությունների դեմ պայքարում համագործակցության համաձայնագիրը: Միջոցառման ծրագիրը նախատեսում է իրավական բազայի հետեւողական միասնացում, ահաբեկչական գործունեության եւ աղօրինի զինված կազմավորումների մասնակից անձանց, հիմնարկների եւ ձեռնարկությունների մասին տվյալների միացյալ միջոցառման զեկեղարանի ստեղծում:

Հիշեցնենք, որ կազմակերպված հանցագործությունների դեմ միասնական պայքարի խնդիրն առաջիններից մեկը առաջարկել էր Հայաստանը՝ ԱՊՀ անդամ երկրների գագաթաժողովում:

Սահմանագոտում անհանգիստ է

ԵՐԵՎԱՆ, 12 ԱՊՐԻԼ, ՓԱՍՏ: Ադրբեջանական կողմը վերջին նախահարձակ է եղել Նոյեմբերյանի սահմանագոտում: Ապրիլի 12-ին, ժամը 12-ից Ղազախի շրջանի Ղուշչի Ձյուռմի կրակակետերից հրաձգային զենքերով գնդակոծվել են սահմանամերձ տարածում աշխատող Ոսկեւան եւ Բաղանիս գյուղերի նախիրները, Բաղանիս-Ոսկեւար ավտոճանապարհը: Տուժածներ չկան:

Երեւանի բնակչությունը բողոքում է էներգետիկ պաշտամիջոցների դեմ

էներգամատակարարման հիմնախնդիրը երեւանի բնակչությանը բաժանել է երկու «հակամարտ» խմբերի. մարդիկ, որ օգտվում են շուրջօրյա հոսանքից (բնակչության մոտ 30 տոկոսը) եւ մարդիկ, որ ապրում են «բացարձակ խավարի» պայմաններում: Խմբագրությունում ստացվում են բազմաթիվ հեռախոսազանգեր (հատկապես Ա-բնակիչներից), որոնց հիշողությունները հաղորդում են. ինչի՞ համար են պատժվում այն քաղաքացիները, որ միշտ բարեխղճորեն վճարել են էլեկտրաէներգիայի վարձը, ինչո՞ւ են զրկվում երեխաներին մի՞ բաժակ թեյ տալու հնարավորությունից, կառավարությունն ինչո՞ւ է պատժարարի դեր ստանձնել սեփական ժողովրդի նկատմամբ: Իսկապես, ինչո՞ւ:

էներգամատակարարման խնդիրներին մի քանի տարի է, որ զբաղվում է Ազգային ժողովի էներգետիկայի հանձնաժողովը: Հանձնաժողովի նախագահ Ալեքսան Ղարիբյանը հայտնեցրեց, որ էներգամատակարարման հիմնախնդիրը կարող է կարգալ բերքի 3-րդ էջում:

ՀՈԱԿ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ

«Հայաստանը պետք է լինի ինտեգրացիոն գործընթացի առաջնեկը Կովկասում»

Հայտարարում է Հայաստանի Ռամկավար ազատական կուսակցության

Երեկ, ապրիլի 12-ին Հայաստանի Ռամկավար ազատական կուսակցության խորհրդակցական ժողովը, որի օրակարգում մի հարց էր. «ՀՌԱԿ մարտավարության հերթական խնդիրներ»: Խորհրդաժողովին մասնակցում էին ՀՌԱԿ ակումբների 210 ներկայացուցիչներ (Երեւանի «Արմենական», «Լեռ», «Վահան Թոքմենց», «Մհերան Տամատյան», «Մալաթիա», «Զարթոնք», «Վան», «Կենտրոն», «Անդրանիկ», «Արա Գեղեցիկ», «Զարեհ Եսայան», «Պայքար», «Եսայի Յաղուբյան», Գյումրիի «Վահան Թեքեյան», «Արշալույս», «Շիրակացի», «Զարթոնք-Շիրակ», «Անի», «Մեր Շահեն», «Փանոս Թեղենգյան», Վանաձորի «Գեորգ Սեւորգյան», Գորիսի «Սյունիք», Արմավիրի «Արմավիր», Ստեփանավանի «Ստեփանասար», Նախիջեւանի «Նախիջեւան» եւ «Եղվարդ», Եղեգնաձորի «Գլաձոր», Մասիսի «Մասիս», Կրասնոսելսկի «Վահան» եւ «Արմավաշեն» ակումբներից) եւ հրավիրվածներից՝ ԱԺՄ, ԳԻԱՐՔՄԻ, ԱԻՄ, ՀԴԿ կուսակցությունների, ՀՀԴ դաստախանատու մարմնի Վեհրանների խորհրդի, Ժողովրդական միության եւ այլ հասարակական եւ ստեղծագործական միությունների կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Լեռնային դահլիճի առաջ ներկայացնելով ՀՌԱԿ մարտավարության հերթական խնդիրներ, ՀՌԱԿ Հանրապետական վարչության ատենապետ Ռուբեն Միրզախանյանը նշեց խորհրդաժողովի նպատակը՝ ցանկանալ կուսակցության մարտավարության մի շարք հիմնարար հարցեր եւ հիմք դնել ՀՌԱԿ 6-րդ դաստագումարին, նա կարեւորեց կուսակցության կառուցվածքային համակարգը ՀՀ տարածքային նոր բաժանմանը համապատասխանեցնելու անհրաժեշտությունը, միաժամանակ ներկաների ուշադրությունը հրավիրելով երջանային կուսակցական ժողովների ցածր հանձնախմբության, Հանրապետական վարչության հետ անբավարար կապի վրա:

Տես էջ 2

Արեւմտյան ապրյուրների հաղորդագրությունների համաձայն, 2-րդ աշխարհամարտի տարիներ Եվրոպայի հյուսիսում խորտակվել է հիմնական գնդով բեռնված գերմանական մի նավ: 90-ից ավելի տարիների ընթացքում մնացած կորստյան հնարավոր պատճառներ չմեկնաբանվեն. ապեսն անիրատեսվելի է», եզրափակվում են նրանք: ՓԱՍՏ:

Իսրայելա-լիբանանյան սահմանում ճգնաժամը խորանում է

12 ԱՊՐԻԼ, BBC: Իսրայելի զինուժն ու «Հեզբոլլահի» գրոհայինները պատասխանատու հարձակումներ են իրականացրել Ասրայելի հարավային գոտիներում գտնվող «Գրաղ» կայանքներից հրթռակոծել է Իսրայելական դիրքերն ու Քիրյաթ Շմոնա քաղաքը, որտեղ առնվազն 5 մարդ է վիրավորվել: Մանրամասները հայտնի չեն, քանի որ Իսրայելը հրթռակոծված վայրերից եկող հաղորդագրությունների նկատմամբ գրաքննություն է մտցրել: «Հեզբոլլահը» հայտարարել է, որ դա Բեյրութի վրա Իսրայելի կողմից հինգշաբթի օրը կատարված հարձակման առաջին պատասխանն է: Իր հայտարարության մեջ «Հեզբոլլահը» խոստացել է պաշտպանել խաղաղ բնակչությանը՝ առանց հետեւանքների հետ հաշվի նստելու: Ի պատասխան դրան Իսրայելը օդից եւ ծովից հարվածներ է հասցրել Հարավային Լիբանանում գտնվող նպատակակետերին, որոնցում, ինչպես ենթադրվում է, «Հեզբոլլահի» գրոհայիններն են թաքնվում: Կիր Նավահանգստից ոստիկանությունը հայտնել է, որ այնտեղ 8 հոգի է վիրավորվել: Նաբաթիա քաղաքում իսրայելական օդուժը ռմբահարել է լրիվ զորանոցները: Ավելի ուշ իսրայելական ուղղաթիռները նոր հարձակում են իրականացրել Բեյրութի շիա մահմեդականներով բնակեցված արվարձանում գտնվող սիրիական դիրքերի վրա: Հիվանդանոցից հաղորդել են, որ 12 սիրիական զինվոր է վիրավորվել: Իսրայելական կողմը հայտնել է, թե դա պատահմամբ է տեղի ունեցել, քանի որ սիրիացիների դիրքերը մոտիկ են գտնվել մզկիթին ու «Հեզբոլլահի» ռադիոկայանին:

Օրվա ընթացքում Իսրայելի աշակցությունը վայելող Հարավային Լիբանանի բանակի կողմից ուժեղ հրետակոծություն է սպասվում եւ խորհուրդ է տրվում շտապ լքել տներն ու հեռանալ, բնակչությունն այդպես էլ վարվել է: Հարավային Լիբանանի բնակչության ելքը տեղ-տեղ խուճապի է վերածվել: Իսրայելի կառավարության մամլո քարտուղարը պահանջել է, որ Լիբանանը միջոցներ ձեռք առնի «Հեզբոլլահին» կանգնեցնելու համար, սակայն Լիբանանի վարչապետ Ռաֆիկ Հարիրին հեռախոսով հայտնել է BBC-ին, որ իր կառավարությունը ոչ «Հեզբոլլահի» եւ ոչ էլ իսրայելամետ Հարավային Լիբանանի բանակի վրա իշխանություն չունի:

Հրդեհ Դյուսելդորֆի օդակայանում

ԲԵՌԼԻՆ, 12 ԱՊՐԻԼ, WSJ: Դյուսելդորֆի օդանավակայանում անակնկալ ծագած հրդեհի հետեւանքով զոհվեց 16 եւ վիրավորվեց ավելի քան 100 մարդ: Ոստիկանության տվյալներով, հրդեհը ծագել է ուղեւորների ժամանման սրահում գտնվող ծաղկի խանութում, խուճապ ստեղծելով ներկաների շարքերում: Սահաղածների մեծ մասը «Էր Ֆրանսի» թռիչքին սպասողների տեղամասում է արձանագրվել: Օդանավակայանը փակվեց 24 ժամով՝ թռիչքները մեղադրում են հրեքներին՝ դեռ ժամանելու համար:

ԱՄՆ

Կոնգրեսական Ջո Քենեդին նախագահին կոչ է անում դատապարտել Հայոց ցեղասպանությունը

Խմբագրությանը հասցեագրված ֆաքսը տեղեկացնում է, որ Մասաչուսեթս նահանգից դեմոկրատ կոնգրեսական Ջոզեֆ Քենեդին կոչ է արել ԱՄՆ-ի նախագահ Բիլ Քլինթոնին հանդես գալու 1915 թվի Հայկական ցեղասպանությունը ճանաչող եւ բացահայտորեն դատապարտող պաշտոնական հայտարարությամբ:

Նախագահին ուղղված ապրիլի 11-ի նամակում Քենեդին հիշեցրել է նրան 1992-ի նախագահական ընտրապայքարի ժամանակ նրա կողմից Հայկական ցեղասպանությունը ճանաչելու վերաբերյալ եղած ավելացրել, որ ապրիլի 24-ի մոտալուտ տարեդարձի նախօրյակին «ժամանակն է, որ Դուք որպես նախագահ եւ աշխարհի ամենահզոր երկրի առաջնորդ հրապարակեք մի հայտարարություն, որով պաշտոնապես դատապարտեք այդ ողբերգությունը:

Ուզում եմ Ձեր ուշադրությունը հրավիրել ամերիկահայ համայնքի անդամների շրջանում ստեղծված այն համատարած զգացմունքների վրա, որոնք Հայկական ցեղասպանության փաստի ընդունումն ու պաշտոնական ճանաչումը Ձեր կողմից դարձնում են բացարձակապես անհրաժեշտություն», գրում է նա, շեշտելով՝ սա խիստ էական հարց է, քանի որ սենեն հայ ընտանիք տառապել է 1915-23 տարիների այդ ողբերգական դեպքերից, երբ օսմանյան կայսրության հաջորդող կառավարությունները փորձել են վերջնականապես լուծել Հայկական հարցը ոչնչացնելով հայերին:

Ամերիկահայ համայնքի հետ իմ երկար շփումներից բաջածանոթ եմ այն խորը ցավին, որ նրանց պատճառել է նախ ցեղասպանության դատապարտելի այդ ողբերգությունը:

«Ի հիշատակ զոհերի, ես կոչ եմ անում, որ պաշտոնական հայտարարությամբ դատապարտեք այդ ցեղասպանությունը», եզրափակում է նա իր նամակը:

digitised by A.R.A.R.@

տեղական

ՀՈԱԿ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ

«Հայաստանը պետք է լինի ինտեգրացիոն գործընթացի առաջնեկը Կովկասում»

Հայտարարում է Հայաստանի Ռամկավար ազատական կուսակցությունը

Մնիցը էջ 1

ՀՌԱԿ ատենադեսը վստահություն հայտնեց, որ ժամանակին ՀՌԱԿ շարքերից հեռացված մի շարք անդամների, ինչպես նաև սփյուռքում գործող ՌԱԿ Բյուրոյի Կ.Վ.-ի կողմից ՀՌԱԿ-ը, նրա ղեկավար գործիչներին վարկաբեկելու դրամի փոխարժեքը, լուրջ խնդիր է դառնում գործարկությունը: Կառավարության կողմից իրականացվող ազատական բարեփոխումները տնտեսության մեջ չեն զուգակցվում անհրաժեշտ սոցիալական հաղթահարումներով», ասաց նա: Ստեղծված իրավիճակի երկը, որ ոչ միայն ներքին զարգացումների, այլև արտաքին ոլորտների արդյունք է, հանգեցրել է հանրային տնտեսության, գոյություն ունեցող համակարգի փլուզում եւ այլն, ՀՌԱԿ-ը տեսնում է ԱՊՀ երկրներում նոր տարածքային ինտեգրացիայի, Ռուսաստանի հետ հարաբերությունների սերտացման, հատկապես տնտեսական ինտեգրացիայի գործընթացի մեջ, որը կարող է դրսեւորվել ֆինանսատնտեսական խմբերի ստեղծմամբ: Այս հարցում կուսակցության դիրքորոշումը միանշանակ է. ինտեգրացիայի տարածքային նոր ասպիսանը Հայոց անկախ պետականության ամրապնդման, Հայաստանի արդյունաբերության վերակենդանացման, մարդկանց աշխատանքով ապահովելով հայրենի հողի վրա դրսեւորվելու, գաղութային կախվածությունից խուսափելու միակ ճանապարհն է, եւ ընդհանուր տարածքային, գործող ռազմաքաղաքական դաշինքը եւ ժողովրդի բարոյաքաղաքական տրամադրվածությունը դրսեւորում են նոր վճռական քայլեր դեպի բազմակողմանի ինտեգրացիա:

«Հայաստանը պետք է լինի Ռուսաստանի եւ մյուս երկրների հետ ինտեգրացիոն գործընթացների առաջնեկը Կովկասում», ասաց ՀՌԱԿ ատենադեսը՝ բացառելով նախկին միութենական հանրապետության վերականգնման հնարավորությունը:

Խորհրդաժողովում Հայաստանի ֆինանսական տեսանկյունից վերլուծվեցին նոր հարկային օրենքները, դրանց ազդեցությունը տնտեսության զարգացման վրա: Հանրապետության ֆինանսական տեսչարժեք, գոյություն ունեցող համակարգի փլուզում եւ այլն, ՀՌԱԿ-ը տեսնում է ԱՊՀ երկրներում նոր տարածքային ինտեգրացիայի, Ռուսաստանի հետ հարաբերությունների սերտացման, հատկապես տնտեսական ինտեգրացիայի գործընթացի մեջ, որը կարող է դրսեւորվել ֆինանսատնտեսական խմբերի ստեղծմամբ: Այս հարցում կուսակցության դիրքորոշումը միանշանակ է. ինտեգրացիայի տարածքային նոր ասպիսանը Հայոց անկախ պետականության ամրապնդման, Հայաստանի արդյունաբերության վերակենդանացման, մարդկանց աշխատանքով ապահովելով հայրենի հողի վրա դրսեւորվելու, գաղութային կախվածությունից խուսափելու միակ ճանապարհն է, եւ ընդհանուր տարածքային, գործող ռազմաքաղաքական դաշինքը եւ ժողովրդի բարոյաքաղաքական տրամադրվածությունը դրսեւորում են նոր վճռական քայլեր դեպի բազմակողմանի ինտեգրացիա:

«Հայաստանը պետք է լինի Ռուսաստանի եւ մյուս երկրների հետ ինտեգրացիոն գործընթացների առաջնեկը Կովկասում», ասաց ՀՌԱԿ ատենադեսը՝ բացառելով նախկին միութենական հանրապետության վերականգնման հնարավորությունը:

Խորհրդաժողովում Հայաստանի տնտեսական կացության մասին ելույթ ունեցավ ՀՌԱԿ Հվ. փոխատենադեսը Գագիկ Գալստյանը: Մի շարք տվյալների մեջբերումով նա ապացուցեց, որ տանձնարակ լիբերալիզմի տիրապետության ներկա պայմաններում մենք կորցնում ենք տնտեսական գլխավոր արժեքներից մարդը, որը չենք կարող փոխարինել. իրեն ազգային պետության. ոչ մի բանով: Հետեւաբար, ասաց նա, անհրաժեշտ է Ռուսաստանի եւ ԱՊՀ մյուս երկրների հետ սկսել ինտեգրացիոն գործընթացները, մանավանդ որ մեր տեխնոլոգիական պատասխանատու ձեռնարկությունները համադասասխանում են միմյանց եւ, մյուս կողմից, արդեն զգացվում է իր նախկին շուկաները չկորցնելու Ռուսաստանի ձգտումը:

Իրենց դիրքորոշումներ ԱՊՀ երկրներում ընթացող ինտեգրացման գործընթացների, ինչպես նաեւ ներկուսակցական խնդիրների մասին ներկայացրին ՀՌԱԿ Կենտրոնական գրասենյակի վարիչ Վասյա Գալստյանը, Կրասնոդարի «Արծվաբեն» ակումբի պատասխանատու Լիդա Մուսայելյանը, Հայաստանի Թեմեյան մշակութային միության վարչության նախագահ Յերունգ Դեվլաբյանը, Գյումրիի ՀՌԱԿ խաղաղային վարչության ատենադեսներ Գեւորգ Մկրտչյանը, ՀՌԱԿ «Ե. Յաղոբյան» ակումբի անդամ, ազատամարտիկ Աշոտ Սարգսյանը:

Հանրագումարի բերելով խորհրդակցական ժողովում արտահայտված կարծիքները եւ մասնագետների հետ կայանալիք քննարկումները նշված հարցերի վերաբերյալ ՀՌԱԿ ՀՎ-ը առաջիկայում հանդես կգա հատուկ հայտարարությամբ:

ԼԻԼԻԹ ԳԱՐԱՍՅԱՆ,

Կանայք սոցիալապես պաշտպանվա՞ծ են

Մարիի 12-ին իրավիճակ էր, երբ դասի մասնակիցները կանանց հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ. քննարկեցին կանանց սոցիալ տնտեսական եւ սոցիալական պաշտպանվածության հիմնահարցը: Կանանց հանրապետական խորհրդի «Ֆորում» ծրագրի շրջանակներում կազմակերպված հերթական կլոր սեղանի օրվա հիմնական բանախոսը ժողովրդագրագետ, ակադեմիկոս Վլադիմիր Խոջաբեկյանն էր: Ակադեմիկոսը կանանց իրավիճակի եւ հանրապետության սոցիալ տնտեսական բնագավառի վերաբերյալ իր ասելիքը կառուցեց խորհրդային ժամանակաշրջանի համեմատությամբ: «Խորհրդային համակարգի պայմաններում, սակայն վերջին տարիների տվյալներով ժողովրդագրության մեջ ընդգրկված բանվոր ծառայողների 46 տոկոսը կանայք էին, որը դրական ազդակ էր», հայտնեց նա: Եվ պետությունը ասում էր կանգնում կանանց աշխատանքային գործունեությունը ապահովելու իմաստով, ինչ որ չափով ասատարելով նաեւ բնականության հարցերում: Այդ առումով որն. Խոջաբեկյանը կարեւորեց կանանց նախաձեռնության ու եռանդության վնասվի առձակարդները: խնդիր էր դրվում այն հասցնել մինչեւ երեխ տարվա, տսկայն...

Հանրապետության կենսամակարդակի զգալի վատթարացումը, լուրջ խնդիր է դառնում գործազրկությունը: Կառավարության կողմից իրականացվող ազատական բարեփոխումները տնտեսության մեջ չեն զուգակցվում անհրաժեշտ սոցիալական հաղթահարումներով», ասաց նա: Ստեղծված իրավիճակի երկը, որ ոչ միայն ներքին զարգացումների, այլև արտաքին գործոնների արդյունք է, հանգեցրել է հանրային տնտեսության, գոյություն ունեցող համակարգի փլուզում եւ այլն, ՀՌԱԿ-ը տեսնում է ԱՊՀ երկրներում նոր տարածքային ինտեգրացիայի, Ռուսաստանի հետ հարաբերությունների սերտացման, հատկապես տնտեսական ինտեգրացիայի գործընթացի մեջ, որը կարող է դրսեւորվել ֆինանսատնտեսական խմբերի ստեղծմամբ: Այս հարցում կուսակցության դիրքորոշումը միանշանակ է. ինտեգրացիայի տարածքային նոր ասպիսանը Հայոց անկախ պետականության ամրապնդման, Հայաստանի արդյունաբերության վերակենդանացման, մարդկանց աշխատանքով ապահովելով հայրենի հողի վրա դրսեւորվելու, գաղութային կախվածությունից խուսափելու միակ ճանապարհն է, եւ ընդհանուր տարածքային, գործող ռազմաքաղաքական դաշինքը եւ ժողովրդի բարոյաքաղաքական տրամադրվածությունը դրսեւորում են նոր վճռական քայլեր դեպի բազմակողմանի ինտեգրացիա:

«Հայաստանը պետք է լինի Ռուսաստանի եւ մյուս երկրների հետ ինտեգրացիոն գործընթացների առաջնեկը Կովկասում», ասաց ՀՌԱԿ ատենադեսը՝ բացառելով նախկին միութենական հանրապետության վերականգնման հնարավորությունը:

Խորհրդաժողովում Հայաստանի տնտեսական կացության մասին ելույթ ունեցավ ՀՌԱԿ Հվ. փոխատենադեսը Գագիկ Գալստյանը: Մի շարք տվյալների մեջբերումով նա ապացուցեց, որ տանձնարակ լիբերալիզմի տիրապետության ներկա պայմաններում մենք կորցնում ենք տնտեսական գլխավոր արժեքներից մարդը, որը չենք կարող փոխարինել. իրեն ազգային պետության. ոչ մի բանով: Հետեւաբար, ասաց նա, անհրաժեշտ է Ռուսաստանի եւ ԱՊՀ մյուս երկրների հետ սկսել ինտեգրացիոն գործընթացները, մանավանդ որ մեր տեխնոլոգիական պատասխանատու ձեռնարկությունները համադասասխանում են միմյանց եւ, մյուս կողմից, արդեն զգացվում է իր նախկին շուկաները չկորցնելու Ռուսաստանի ձգտումը:

Իրենց դիրքորոշումներ ԱՊՀ երկրներում ընթացող ինտեգրացման գործընթացների, ինչպես նաեւ ներկուսակցական խնդիրների մասին ներկայացրին ՀՌԱԿ Կենտրոնական գրասենյակի վարիչ Վասյա Գալստյանը, Կրասնոդարի «Արծվաբեն» ակումբի պատասխանատու Լիդա Մուսայելյանը, Հայաստանի Թեմեյան մշակութային միության վարչության նախագահ Յերունգ Դեվլաբյանը, Գյումրիի ՀՌԱԿ խաղաղային վարչության ատենադեսներ Գեւորգ Մկրտչյանը, ՀՌԱԿ «Ե. Յաղոբյան» ակումբի անդամ, ազատամարտիկ Աշոտ Սարգսյանը:

Հանրագումարի բերելով խորհրդակցական ժողովում արտահայտված կարծիքները եւ մասնագետների հետ կայանալիք քննարկումները նշված հարցերի վերաբերյալ ՀՌԱԿ ՀՎ-ը առաջիկայում հանդես կգա հատուկ հայտարարությամբ:

ԼԻԼԻԹ ԳԱՐԱՍՅԱՆ,

ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ

ԳԻՆԱՐՔՄԻ-ն եւ ՀԴԿ-ն արդար ընտրություններ են պահանջում

Հիշեցնելով 1995 թ. հուլիսի 5-ի ընտրությունների ու հանրաքվեի փորձը, դրանք համարելով անարդարացի եւ կեղծված, ձգտելով բացառել 1996 թ. նախագահական ընտրություններում նման խախտումների կրկնությունը, Գիտարդյունաբերական եւ հաղթաճիակ միությունն ու Հայաստանի դեմոկրատական կուսակցությունը հանդես են եկել հայտարարությամբ, որտեղ մասնավորապես ասված է.

«Ազատ եւ արդար ընտրությունների երաշխիքներն ու նախադրյալներն են՝

ա) 1995 թ. ընտրությունների եւ հանրաքվեի արդյունքների հրապարակային, բաց քննարկումը, օրինախախտման եւ կանայականության դեպքերի դատապարտումը, հետագայում դրանց բացառման երաշխիքների ստեղծումը,

բ) ընտրությունների հաղթական բոլոր ուժերի մասնակցության ապահովումը, նրանց կանայական հեռացման բացառումը, նրանց գործունեության եւ նախընտրական քարոզչության հավասար հնարավորությունների ստեղծումը,

գ) ընտրություններին Հայաստանից ժամանակավորապես դուրս եկած նրա հաղթաճիքների հնարավոր մեծագույն մասի մասնակցության ապահովումը,

դ) ՀՀ նախագահի ընտրությունների մասին օրենքում հակաժողովրդավարական եւ խարդախության եւ կեղծարարության հնարավորություններ ընձեռող փոփոխությունների վերացումը:

Եթե այս ակնհայտ պայմանները չբավարարեն, անկասկած է, որ Հայաստանի ներկա ղեկավարությունը առանց վարանելու կգնա ընտրական ողջ գործընթացի եւ ընտրությունների արդյունքների կեղծման:

ԳԻՆԱՐՔՄԻ-ն եւ ՀԴԿ-ն հույս են հայտնում, որ Հայաստանի այն բոլոր հաղթական ուժերը, որոնք չնայած առկա տարակարծություններին, որոնց հիմնական նոր ճանաչում են ազատ, արդար եւ չկեղծված ընտրություններում ժողովրդի կամքի արտահայտության իրավունքը, կցուցաբերեն համերաշխություն այս առանցքային հարցում եւ հաստեղ քայլերով կստեղծեն հաղթակիր հասարակությանը բնորոշ ընտրությունների անցկացման նախադրյալներ:

Հակառակ դեպքում նրանք կդառնան անօրինականության, մարդու իրավունքների զանգվածային խախտումների եւ լեգիտիմություն չունեցող ռեժիմի հաստատման մասնակիցներ»:

Վերջում զույգ կազմակերպությունները պատասխանատվություն են հայտնում նշված հարցերը բանակցային բոլոր ուժերի հետ քննարկելու:

Ուսանողական մեկօրյա դասադուլ առանց արհմիության

ԵՐԵՎԱՆ, 12 ԱՊՐԻԼ, ՆՈՅԵՄՅԱՆ ՏԱՊԱՆ: Ապրիլի 12-ին երեւանի պետական բուհերի ուսանողները անցկացրին բողոքի մեկօրյա դասադուլ: Միացյալ ուսանողական երիտասարդական շարժման գլխավոր շտաբի գլխավորությամբ մոտ 200 ուսանողներ՝ «Ո՞ւր են գնում մեր թոռակները», «Պարոնայք, մի հդփացեք մեր հաշվին» լոզունգների ներքո շարժվեցին ՀՀ նախագահի նստավայր: Ցուցարարները պահանջում էին կրթաթոշակների վերականգնում (նոր որոշման համաձայն, ուսանողների 40%-ը զրկվում են կրթաթոշակներից), ասպիրանտուրայի տեղերի վերականգնում (վերջիններիս քանակը կրճատվել է 50%-ով), ուսանողների համար տրանսպորտի գների պահպանում, դասախոսների եւ մանկավարժների սոցիալական վիճակի բարելավում:

Պահանջների թվում է նաեւ բուհերում ուսումնական ամիսների վերականգնումը, ինչը՝ հնարավորություն կտար ուսանողներին ազատվել զինվորական ծառայությունից ուսումնական տարիներին: Շտաբի անդամ Էլեոնորա Մանանդյանի կարծիքով, բուհերի երջանավարտները չպետք է ծառայեն բարձրագույն կրթություն չունեցող զինծառայողների հետ, այլ առանձին զորամասերում:

Ցուցարարների պատվիրակությանն ընդունեց ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավար Շահեն Կարամանուկյանը: Նա խոստացավ բավարարել տրանսպորտի գների ուսանողներին տրվող զեղչի ապահովումը, որ բոլորի դեպքում ուսանողները կարող են դիմում գրել իրեն՝ Շ. Կարամանուկյանին: Կրթաթոշակները կպահպանվեն մինչեւ սեպտեմբեր: Ինչ վերաբերվում է ուսումնական ամիսներին, որն Կարամանուկյանն ասել է, որ պետությունը կանի այնպես, ինչպես նպատակահարմար է գտնում: Խոսելով դասախոսների սոցիալական վիճակի մասին, նա նշել է, որ Հայաստանի Հանրապետությունում չկա մեկը, որը չի պահանջում սոցիալական վիճակի բարելավում՝ սկսած նախագահի աթոռից:

Է. Մանանդյանի խոսքերով, ուսանողների պահանջները չեն բավարարվել Հայաստանի նախագահի կողմից, եւ ուսանողությունը կշարունակի իր պայքարը:

Դեռեւս մարտի 2-ին «Արդարություն» ուսանողական արհմիությունը հրավիրել էր հավաք գրեթե նույն պահանջներով եւ մինչեւ ապրիլի 12-ը ժամանակ էր տվել ՀՀ կառավարությանը, ասելով, որ հակառակ դեպքում կպահանջի կառավարության հրաժարականը: Արհմիության ներկայացուցիչ Տիգրան Պազարյանի խոսքերով, արհմիության ղեկավարների երեւանից բացակայելու ժամանակ խախտվել են բոլոր պայմանավորվածությունները: Արհմիությունը անիմաստ է համարում կառավարությանն ուղղված պահանջներով դիմել ՀՀ նախագահին: Արհմիության անդամները չմասնակցեցին մարտի 12-ի ցույցին՝ հայտարարելով, որ իրենց պայքարը կսկսեն մարտի 15-ից:

Ստեղծվեց օտար լեզուների բուհական դասախոսների ասոցիացիա

Որպես վերջին մի քանի ամիսների տեղաշարժ աշխատանքների, կոնստրուկտիվ հանդիպումների ու գործնական խորհրդակցությունների հետեւանք, երեկ վերջապես մարմին առավ օտար լեզուների բուհական դասախոսների ասոցիացիան: Բրյուսովի անվան ինստիտուտի հայկական մասնաճյուղի փոքր դահլիճում հավաքված հոծ բազմությունը, որտեղ ներկայացված էր հանրապետության մայր բուհի՝ համալսարանի, երեւանի այլ բուհերի եւ այլ քաղաքների բարձրագույն ուսումնական հաստատությունների դասախոսական կազմը, միաձայն նորաստեղծ ասոցիացիայի նախագահ ընտրեց օտար լեզուների ինստիտուտի ռեկտոր Իվետա Սոսֆելյանին: Փոխնախագահներ ընտրվեցին Սեդա Գասպարյանը, Կարինե Աբոյանը եւ Ասոն Բալեսիզյանը: Ընտրվեցին նաեւ վերստուգիչ հանձնախմբի անդամներ: Վարչության կազմի մեջ մտան տարբեր բուհերի դեկաններ եւ օտար լեզուների ամբիոնի վարիչներ:

Ասոցիացիայի առաջ ծառացած խնդիրները բազմաթիվ են ու բազմաբնույթ: Այն պետք է զբաղվի ինչպես կրթական, տեխնիկական, այնպես էլ հրատարակչական ու՝ կադրային խնդիրներով, եւ փորձի ոչ միայն վերահասատել կարգը նախկին խորհրդային Միության տարբեր բուհերի հետ, այլ նաեւ նոր կարգեր ստեղծի այլ երկրների համադասասխան հաստատությունների հետ: Բարի երթ եւ բեղուն գործունեություն նոր ասոցիացիային:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության 9 տարի
Գլխավոր եւ հիմնադիր
«Ազգ» թերթի խմբագիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Թաղ 562941, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET azg@armenco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱՍՈՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ / հեռ. 521635
Խմբագրի տեղակալ
ՍԱՄՎԵԼ ԳԱՍՊԱՐՅԱՆ / հեռ. 529221
Տնօրեն
ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍՅԱՆ / 562863
A STYLE հանձնարարական
ծառայություն / 583841
Էջը եւ ասամբելը պատրաստվել է
Apple Macintosh
հանձնարարական ծառայությամբ
«Ազգ» թերթի
Տպումը «Ազգին» պատրաստիր է
«AZG» DAILY NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

տեղական

Տեւական ժամանակահատված է, ինչ մենք ՀՀ բնակիչներս, դառնում ենք սոցիալտնտեսական դարձում իրականացվող մեծաթիվ նոր ձեռնարկությունների աղյուսակների եւ հիմնականների անմիջական կրողներ: Ամենավերջին եւ ամենաբարդ օրինակը համատիրությունների ստեղծումն է, որն ուղեկցվում է շահագրգիռ միջազգային եւ տեղական կազմակերպությունների փութաջան ջանքերով:

Ոչ դրական փութաջանությամբ համատիրությունների ստեղծմանը իր օրենսդրական նոպաստն է բերում Ազգային ժողովը մեկ հարվածով 1-ին ընթերցմամբ ընդունելով Համատիրության մասին ՀՀ օրենքի նախագիծը: «Մեր համամաղաքացիներն արդեն ինքնակազմակերպվում են այս հարցերում, իսկ օրենքը ընդունել արդեն իսկ ուշացել ենք», ասվեց 24 ժամվա ընթացքում 2 ժամ տվող էլեկտրաէներգիայից առավել վաս տարբերակն ընդհանրապես այդքան բանկ հաճույքից զրկելն է: 10-15 օր տեղ հոսանքազրկումից հետո այս նորօրյա գիտափորձի հեղինակները երկարդ փոյի գործողություններին են անցնում, որը հնչում է այսպես «հոսա՞նք եք ուզում 3000-ական դրամ հավաքեք»: Ո՞ւմ, ինչի՞ համար, անհայտ է. եթե հաշվիչների «դուրբերման համար է, ինչո՞ւ վերոհիշյալ կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունն առաջադրվելու համար բոնահարվում են բնակիչները: Իսկ եթե այդ զումարը զանձվող բազմաթիվ նմանօրինակ կանխավճարներից մեկն է, ապա, ներեցեք, բարեխիղճ բնակիչներս ինչո՞ւ ոչեմ է զբաղվենք անբարեխիղճ հարեւանների «վերադասիարակությամբ»:

ԷՆԵՐԳԱՄԱՍԱԿԱՐԱՐՈՒՄ

Պարտադիր «ինքնակազմակերպումը» վերածվում է պաշտամիջոցի

«Հանրապետություն» միավորման անունից խորհրդարանում հայտարարեց ԱԺ փոխնախագահ Կարապետ Ռուբինյանը:

Օրենքի նախագծի ընդունման հարցերությունը, դրա բովանդակությունն առանձին քննարկման առարկա է, իսկ այսօր ուզում ենք անդրադառնալ հենց դրան. Ռուբինյանի խոսքում հիշատակված «մեր համամաղաքացիների ինքնակազմակերպման» խնդրին:

Մեր օրենսդիրներն անտեղյա՞լ են, թե՞ փորձում են սյդպիսին երեւալ, մինչդեռ բազմաթիվ փաստեր կարող ենք հիշատակել, որ այդ «ինքնակազմակերպումը» ընթանում է ոչ հեռու անցյալից հայտնի «կամավոր դարաստիր» միջոցառումների հանգույն:

Նույն «կամավոր դարաստիր» սկզբունքով է ընթանում նաեւ էլեկտրաէներգիան սպառողներին վաճառող սահմանափակ դարաստանավորությամբ ընկերություններին բնձկչության անիմաստությունը: Եւ դրանց այդ անդամակցության իրականացման առաջին դարաստիր եւ անհեռանկարելի գայման սկսվում է «օբյեկտում» հայտնված հերթական գոհերի (իմա բնակիչների) տեսական հոսանքազրկումը: Եւ մենք բնակիչներս, սկսում ենք ըմբռնել ժողովրդական իմաստության ողջ խորությունը, որ «վաղից վատն էլ կա»: Այնպես աղրում եմ բաղաքի ծայրամասային թաղամասերից մեկում Ներքին Շենգավիթում, որն արդեն 12 օր հոսանքազրկված է: Եւ զարմում է նույն վերոհիշյալ սգենարը, որն այլ կերդ չես անվանի, բան է լեկտրաէներգիայի տեսոր: Մի՞թե անվերջ կարելի է դաշտամիջոցներ իրականացնել սեփական ժողովրդի դեմ: Եւ դա միայն այն դաշտանով, որ դեռությունը ցանկություն չունի՞ որեւէ դարաստանավորություն ստանձնել բաղաքացիների հանդեպ: Իսկ դեռությունն եւ հասարակությունն միջեւ առաջացած խոր ճեղքվածքները փորձում են «լցնել» ժամանակակից կամ ժամանակավրեպ արտասահմանյան ծրագրերով, որոնց իրագործումը ֆինանսավորում են համաաշխարհային միջազգային կազմակերպությունները: Ի՞նչ է, բոլոր բնագավառներում հասե՞լ ենք արեւմտյան սահմանագիծը, մնացել է բնակիչների բոնի «ինքնակազմակերպվե՞լը»: Երիցս անիմաստ եւ անտրամաբանական ենք համարում, որ օտարաերն եւ օտարալեզու ծրագրերով՝ փորձում են կանոնակարգել համընդհանուր խառնաստիրոն ու «խառը»:

Եւ մոռացվում է, որ հասարակական կյանքի «կանոնակարգման» արեւմտյան փորձը չի կարելի արհեստականորեն ներմուծել ազգային հոգեբանություն եւ սովորույթներ ունեցող Հայաստանում: Առավել եւս անհնար է այդ «կանոնակարգումը» իրականացնել Երեւան քաղաքից կամ ժամանակավրեպ արտասահմանյան ծրագրերով, որոնց իրագործումը ֆինանսավորում են համաաշխարհային միջազգային կազմակերպությունները: Ի՞նչ է, բոլոր բնագավառներում հասե՞լ ենք արեւմտյան սահմանագիծը, մնացել է բնակիչների բոնի «ինքնակազմակերպվե՞լը»: Երիցս անիմաստ եւ անտրամաբանական ենք համարում, որ օտարաերն եւ օտարալեզու ծրագրերով՝ փորձում են կանոնակարգել համընդհանուր խառնաստիրոն ու «խառը»:

Եւ մոռացվում է, որ հասարակական կյանքի «կանոնակարգման» արեւմտյան փորձը չի կարելի արհեստականորեն ներմուծել ազգային հոգեբանություն եւ սովորույթներ ունեցող Հայաստանում: Առավել եւս անհնար է այդ «կանոնակարգումը» իրականացնել Երեւան քաղաքում:

Տարեսկզբի հոսանքը նվաճվում է գրոհո՞վ

24-ժամյա էներգամատակարարման մասին, թվում է, ամեն ինչ ասվել է: Սակայն հարցակարները մնում են: Ապրիլից սկսած, այն բեռները (մասնավոր տները), որ դեռ չեն անցել ընդհանուր հաշվիչների համակարգին, զրկված են հոսանքից: «Մինչեւ ե՞րբ» հարցի դաշտախտանը փորձեցինք ստանալ էներգետիկայի նախարարության լրատվական կենտրոնից:

Այսքեղ դարգաբանեցին, որ, ինչպես բազմիցս տեղեկացվել է մամուլի (այդ թվում նաեւ «Ազգի») եւ հեռուստատեսության միջոցով, տարբերյա էներգամատակարարման գործընթացի կարեւոր բաղադրիչներից մեկը բեռների, բաղամասերի բնակիչների նախաձեռնությունն է: Նրանք, ընտրելով լիազոր ներկայացուցիչներ բեռի, բեռների խմբի, բաղամասի համար եւ ստորագրելով համաաղաստխսան դայմանագիրը (դայմանագրի միամնական ձեւը հաստատված է), դեռ է դիմեն երբանային էլեկտրացանցային կազմակերպություններին հեռագրագործությունների համար (ընդհանուր հաշվիչի տեղադրում, անհրաժեշտության դեպքում նոր էլեկտրահաղորդման գծերի անցկացում եւ այլն): Ասել է թե «նստել բախտին, աղասել բախտին» գործելակերպով առաջնորդվողների համար էլեկտրաէներգիան կարող է դառնալ հին օրերի նոր՝ նոյնքիսի խաղ հաշ, ինչպես երկնագույն վառելիքը, եր ոչ հեռու անցյալում՝ բոցկլտում էր մեր գազօջախներում: Այնպես որ, հարգելի երեւանցիներ, հիշեք, որ սարը չի գնում Մուհամեդի մոտ, այլ Մուհամեդն է գնում սարի մոտ, ինքնակազմակերպվեք եւ «հաշվիչավորվեք», մոռացեք անհասական հաշվիչների հետ նախկինում կիրառվող «խորամանկությունները», միայն ծախսած հոսանքի դիմաց վճարելու դեպքում կվերականգնվի էներգամատակարարումը ձեր բեռում, մուտքում, բնակարանում: Վճարեք, եթե նույնիսկ դեռությունն ուշացնում է ձեր աշխատավարձը, բուսակը, նոպասը: Ինչդե՞ս: Այդ արդեն ձեր խնդիրն է: Շուկայական հարաբերությունների հորձանուտում գտեք տեղը, ձեր դերը, եւ ստիպված չեք լինի լինել երկիրը:

Նրանց, ովքեր արդեն նվաճել են տարբերյա էներգամատակարարման բարձունքը, բայց դժվարություններ ունեն տարբեր կարգի կենցաղային վճարումների հետ, առաջարկում ենք մի քանի խորհուրդներ, որ՝ կարծում ենք, բայլ կլան խնայողաբար օգտագործել ձեր ընտանեկան բյուջեն:

1. Էլեկտրական սալիկից խուսափելու համար դարձեք դարաստանավորման նոպասակներով օգտվելիս հիշեք, որ այն կարելի է ժամանակ առ ժամանակ անջատել (միացումների առանձին սալիկը որոշ ժամանակ շարունակում է ջերմություն արտադրել): Բացի խնայողությունից, դա փոխարինում է «մարմանդ կրակի» էֆեկտին:

2. Լվացքի համար օգտվեք սառը ջրից, իսկ ամանը ջուրը կարող եք տաքացնել՝ օգտագործելով արեգակային էներգիան:

3. Սոլիտսկեդենը (հատկապես անկողնային) կարող եք չարդուկել, դա կենսական անհրաժեշտություն չէ. բավարարվեք հագուստի արտաքին տարբեր կարգի բեռելով:

4. Նվազեցրեք սենձական հիգիենայի խոշոր միջոցառումների հաճախականությունը, հատկապես, եթե խնդիրներ ունեք նաեւ ջրամատակարարման հետ:

Սկզբի համար, բերեմ, բավական է: Վստահ եմ, որ հայկական ճկուն միտքը խնայողաբար արդեն նոր հնարավորություններ կբացահայտի:

ԼԻԼԻԹ ՊՈՂՈՍՅԱՆ

ԿԱԼԻՖՈՐՆԻԱ

1000 հայ մասնակցեց Ազգային տուրֆի մարաթոնին

Ապրիլի 7-ին սփյուռքահայ համայնքներում անցկացվեցին Ազգային տուրֆի միջոցառումներ:

Սուրբ Զատիկի տոնի օրը Հիմնադրամի՝ Ամերիկայի Արեւմտյան ափի հանձնախումբը եւ ԱՄՆ Կալիֆորնիա նահանգի Հայ եկեղեցիները կոչ են արել մասնակցել Ազգային տուրֆի մարաթոնին:

Եկեղեցիների մուտքի առաջ, հատուկ այդ նպատակով ստեղծված կետերում եկեղեցական կամավորները եւ Հիմնադրամի ներկայացուցիչները ընդունում էին մասնակիցների Ազգային տուրֆի վճարումները:

Այդ օրը եկեղեցու բեմերից ժողովրդին ուղղված խոսքի ու քարոզների բեման մեկն էր՝ հայրենիք ու սփյուռք ափերի կամրջման խոսքունակից միջոցառումը: «Հայաստան» հիմնադրամի «Ստեփանակերտ-Երեւան-Լոս Անջելես» Ազգային տուրֆի մարաթոնը ողջ ամերիկահայության շրջանում միաբանորեն գործելու ու միասնական մասնակցություն ապահովելու միտում է առաջ բերել:

Միայն ապրիլի 7-ին Կալիֆորնիայում մարաթոնին մասնակցել է ավելի քան 1000 հայ: Մասնակցությունը շարունակվում է:

Հաղորդումներ Ազգային տուրֆի մարաթոնին

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի ապրիլի 5-ի ընդլայնված նիստում որոշում է ընդունվել ափխաակազմի ամսական ափխաավարձի մեկ տոկոսը հիմնադրամին հատկացնելու մասին: ՀՀ ԳԱԱ նախագահությունը իրենց նախաձեռնությանը միանալու կոչով դիմել է ակադեմիայի համակարգի ինստիտուտներին:

Հայաստանի ամերիկյան համալսարանի նախագահ Միհրան Աղաբաբյանը տեղեկացրել է, որ ՀԱՀ-ի ողջ անձնակազմը, թվով 500 մարդ, հատկացրել է մեկ միլիոն դրամ՝ յուրաքանչյուրից 2000-ական դրամի չափով:

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Աշոտ Կարապետյանը իր գիտական կոչման համար ակադեմիայից 1996 թ. ապրիլ-դեկտեմբեր ամիսներին ստանալիք ողջ գումարը փոխանցում է Համահայկական հիմնադրամի հաշվին:

Հիմնարկության ափխաավարձային ֆոնդի 5 տոկոսը մշտապես որոշես Ազգային տուրֆ հատկացնելու որոշում է ընդունել Արմենիրես ոչեսական լրատվական գործակալությունը:

Նորաստեղծ Արդյունաբերողների եւ գործարարների միությունը դարաստանվել է մեկ միլիոն դրամի չափով մասնակցություն ունենալ «Հայաստան» հիմնադրամի «Ստեփանակերտ-Երեւան-Լոս Անջելես» Ազգային տուրֆի մարաթոնին:

140 հազար դրամ է փոխանցել մարաթոնի հաշվին ՀՀ արդյունաբերության նախարարության «Մեսալուրգիմոնտաժ» ձեռնարկությունը:

ՀՀ Սահմանադրական դատարանի ափխաակազմի ղեկավարի ծանուցման համաձայն՝ ողջ ափխաակազմը որոշում է կայացրել մշտապես անցնել Ազգային տուրֆի՝ ափխաավարձի մեկ տոկոսի չափով: Իսկ Սահմանադրական դատարանի նախագահը Ազգային տուրֆ է վճարում Հիմնադրամի ստեղծման օրվանից՝ ափխաավարձի 10 տոկոսի չափով:

ՀՀ խաղաքաղաքացիության նախարարության 30 ափխաակիցներ նույնպես անցել են մշտական Ազգային տուրֆի:

Մարս, ապրիլ եւ մայիս ամիսների ափխաավարձի 10 տոկոսի չափով իրենց հատկացումն են կատարել «Հայաստան» հիմնադրամին ՀՀ գյուղատնտեսության ակադեմիայի ոչեսորատի անդամները:

Մասնակցությունը շարունակվում է:

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՍԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ

ԱՄՆ դեսպանությունում բացվեց տեղեկատվական կենտրոն

Երեկ Երեւանում ԱՄՆ դեսպանության շենքում հանդիսավոր դայմաններում բացվեց Ամերիկայի Միացյալ Նահանգների լրատվական գործակալության տեղեկատու աղբյուրների կենտրոն: ԱՄՆ դեսպան Պիտեր Թոմսոնը կտրեց կարմիր ժապավենը, իսկ մինչ այդ իր ելույթում մասնավորապես նշեց, թե կենտրոնը նախեւառաջ հայաստանցիների համար է: Հայաստանի Ամերիկյան համալսարանի գրադարանից հետո, ԱՄՆ լրատվական գործակալությունը այս կենտրոնում ստեղծել է երկրորդ գրադարանը՝ շուրջ 600 գրքով: Այդ մասին հայտնեց դեսպանության հասարակայնության հետ կապերի գծով ղեկավարի տեղակալ Մորգան Լիդիկը: Հայերեն լեզվով արտասանած իր ելույթում դրն Լիդիկը նշեց նաեւ, որ այս կենտրոնի բացումը մասն է կազմում այն ընթացքի, որն աջակցել է Հայաստանում ժողովրդավարական ավանդույթների զարգացմանը: Այդ իմաստով մեծ դեր կարող է խաղալ այն տեղեկատվությունը, որը կուսակված է եւ կուսակվելու է կենտրոնում: Թե՛ գրականությունը եւ թե վաղուը այստեղ մասնագիտացված են: Ինտերնետ կայի եւ տեղեկատվական բանկի միջոցով կարելի է ծանոթանալ միջազգային մամուլի (հիմնականում ամերիկյան) հրապարակումներին, ցանկության դեպքում նաեւ տեղում համակարգիչների միջոցով տպագրել այդ լրատվությունը:

Պրն Լիդիկի ասելով, առայժմ այդ ծառայությունները կլինեն անվճար: Հետագայում կենտրոնի վճարման հարցը, բայց այն կարող է կրել խորհրդանշական բնույթ եւ կվերաբերի միայն նյութերի տպագրմանը: Տեղեկատու կենտրոնից կարող են օգտվել թե կառավարության անդամներն ու դաշտպանավորները, թե կրթության, գիտության ներկայացուցիչներն ու լրագրողները:

Ա. Հ.

ՀԱՄԱՌՈՏ

Նախարարությունները փոխատեղվում են

ԵՐԵՎԱՆ, 12 ԱՊՐԻԼ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Շաս հաղորդագիներ այսօր չկարողացան զանգահարել ՀՀ գյուղատնտեսության ու դարենի նախարարություն: Եւ ոչ այն դաշտանով, որ չէին աշխատում հեռախոսները: Այդ գերատեսչության աշխատակիցները տեղափոխվում էին Նալբանդյան փողոցի այն շենքը, որտեղ մի ժամանակ տեղավորված էր նախկին դարենի ու մթերումների նախարարությունը: Իսկ Հանրապետության հրապարակում ազատված շենքը կգրաղեցնի ՀՀ արտգործնախարարությունը: Բաղրամյան դողոցայում գտնվող շենքը տրվում է Հայաստանի Սահմանադրական դատարանին:

Գյումրի. Մերձքաղաքային տրոլեյբուսային երթուղին գործում է

ԳՅՈՒՄՐԻ, 12 ԱՊՐԻԼ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Գյումրի-Ախուրյան 7 կիլոմետրանոց տրոլեյբուսային գիծը, որը շարք մտավ 1988 թ.-ին, գործեց ընդամենը 1 օր՝ դեկտեմբերի 6-ին: Այդ հույժ անհրաժեշտ երթուղու վերաբացման ուղղությամբ նախկինում ձեռնարկված քայլերը աղարդյուն էին: Միայն Շիրակի մարզպետի մոտ կայացած խորհրդակցության ժամանակ կոնկրետ հանձնարարական տվեց շուտափույթ վերականգնել եւ շահագործել երթուղին: Մարզի անդրանիկ մերձքաղաքային տրոլեյբուսային երթուղին արդեն շահագործման է հանձնվել: Այժմ Գյումրիի տրոլեյբուսային կոնտակտային ցանցի երկարությունը հասնում է 13 կմ-ի: Առաջիկայում նախատեսվում է սկսել նաեւ Շիրակացի փողոցի կոնտակտային ցանցի կառուցումը, որը նորակառույց բաղամասերը կարճ ճանապարհով կկապի քաղաքի կենտրոնի հետ:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ԱՄԲԻՈՆ

Ղարաբաղյան հակամարտությունը իր հիմքերի ու միջազգային իրավունքի տեսանկյուններից

Ղարաբաղյան հակամարտությունը մեր օրերի, թերևս, ամենից շատ արծարծվող հարցերից մեկն է մեզանում եւ ինչու չէ, միջազգային շրջաններում: Շնայած դրան, բախման մասին դատկերացումները մնում են չհստակեցված ու մշուշոտ: Բավական է ասել, որ 88-ին վերաբորբոքված եւ 91-ին զինված բախման վերածված հակամարտությունը ցայսօր չի ստացել միջազգայնորեն ընդունված որակում: Ավելին, կարելի է միանշանակորեն արձանագրել, որ շահագրգիռ բոլոր երկրները բացահայտորեն անտեսում են բախման խաղաղական կարգավորման լուծումները նրա բնույթից եւ անմիջական իրավական հիմքերից բխեցնելու տրամաբանական ու բնական թվացող դիրքորոշումը: Խոշոր տերություններին դա հնարավորություն է տալիս հակամարտության բնույթի մեկնաբանություններում կառուցված լինել իրավական կարգի որեւէ նախադատմանով եւ բախման կարգավորման դրոցեսներին «ներկայանալ» միայն... սեփական շահերով: Նույն նկատառումներով հակամարտության իրավական հիմքերի արծարծումից խուսանավում են Բաքվի իշխանությունները, որոնք լավ են գիտակցում, որ բախման մերձավոր դատմաքաղաքական ու միջազգային-իրավական հիմքերը իրենց օգտին չեն: Արդ, ինչ դրույթների, իրավական փաստերի ու փաստարկների մասին է խոսքը:

Առաջին. 1918 թվականին հռչակված եւ բարեկամական ինտերվենցիայի հետեւանքով Բաքվում հաստատված մուսավաթական Ադրբեջանի Հանրապետությունը միջազգային իրավունքի տեսակետից երեսնիցն օրինական իշխանություն չի ունեցել արեւելյան Այսրկովկասի (Ադրբեջանի) հայկական էթնիկական տարածքներում, այդ թվում եւ Լեռնային Ղարաբաղում, որ 1918-1920 թվականներին-առաջին կայսրության վերացումից հետո փաստական իշխանությունը գտնվել է Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի ձեռքում: Հայտնի է, որ Ադրբեջանի Հանրապետությունը ստեղծված է եղել հաշվի նստելով գինված բախման մեջ իր հիմնիշխանությունը պաշտպանած Արցախի հետ եւ դրամանագրային կարգի մեջ մտնել նրա Ազգային խորհրդի հետ: Հանրահայտ է նաեւ, որ Ազգերի լիգան չի ճանաչել Ադրբեջանի Հանրապետությունը: Հարեւանցի մի նշում. Խորհրդային Ռուսաստանը:

Չորրորդ. Խորհրդային ժամանակաշրջանի հիմնական դեռատիրապետական փաստաթուղթը, որով վճռվել է Լեռնային Ղարաբաղը Խորհրդային Ադրբեջանի կազմի մեջ մտցնելու հարցը, 1921 թվականի հուլիսի 5-ի Կոմկուսակցության որոշումն է: Իր բովանդակությամբ ու բնույթով այդ ոչ միանշանակ փաստաթղթի նկատմամբ կանխակալ միտքդրական մոտեցումը, իմ կարծիքով, բույլ չտվեց մեզ Կոմկուսակցության որոշման մեջ տեսնել իրավամաքաղաքական այն լիցքը, որը կարող էր ծառայել հայկական կողմին թե դիվանագիտական, թե քաղաքական-քարոզչական դրսերում: Բնկը փաստաթղթի հիմք-առաջադրյալ կարող է լինել հետեւյալ հարցերը, որոնք ներկայանում են Ադրբեջանական կողմի այն դիրքորոշումներ, թե դատարկեցնում հարցը Ադրբեջանի հետ: Եւ իրոք, Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ այդ սահմանները Հոչակագիրը երկրատարածքի հայրության ազգային-դեռական ավանդույթների ու միջազգային իրավունքի նորմերի կողքին իր կայացման իրավական հիմքերի շարքում հիշատակում էր «ԽՍՀՄ կազմից միակողմանի հանրադեռության դարձ գալու հետ կապված հարցերի լուծման կարգի մասին» օրենքը, որ հաստատում էր ազգային իմքնավարությունների իրավունքը իմքնարտայնորոշելու իրենց դեռական-իրավական կարգավիճակի հարցը միակողմանի հանրադեռությունների ԽՍՀՄ կազմից դուրս գալու դեպքում: ԼՂՀ-ն, այսդիսով, իր անկախությունը հռչակել է այն երկրի «լուծարման օրենքների» հիման վրա, որի մեջ նա կար որպես իմքնավար ազգային կազմավորում: ԼՂՀ-ն թե իրավական, թե վարչամարտական իմաստով Ադրբեջանի Հանրապետության կազմում չէր, երբ վերջինս ճանաչվեց: Սիա թե ինչու ԼՂՀ միջազգային ճանաչումը նաեւ սահմանների անձեռնմխելիության սկզբունքի խախտում չի նշանակում:

ԼՂԻՄ-ը եւ այնուհետեւ ԼՂՀ-ն թե միեւնույն ԽՍՀՄ լուծարումը, թե ԽՍՀՄ բուն լուծարման ընթացքում չեն ընդունել դեռատիրավական բնույթի որեւէ ակտ, որը հասկանար ԽՍՀՄ Սահմանադրության կամ միջազգային իրավունքի նորմերին: Պատահական չէ, որ նախկին ԽՍՀՄ բարձրագույն դեռական մարմինները չեն բեկանել ԼՂՀ-ի ընդունած դեռատիրավական փաստաթղթերն ու իրագործած ակտերը, այն դեպքում, երբ ադրբեջանական կողմի ընդունած ակտերի մեծ մասը ճանաչվել է որպես հակասահմանադրական ու անվավեր, ընդունման օրից:

1992 թվականից սկսած հանձին Ադրբեջանի Հանրապետության Արեւմուտքը ճանաչեց մի երկրի, որն ընդունելը եւեթ տարի առաջ իրագործել էր սանդղակի դիրագործությունը եւ շարունակում էր հայաջինջ քաղաքականությունը որդ արեւելյան Այսրկովկասում: Արեւմուտքը ճանաչեց մի երկրի, որը «վերակազմվում» էր Կիսդրոսի բարեկամ հանրապետության ճանաչարկով ինտերվենցիայի ու բնիկ ժողովուրդների կոտորածի ճանապարհով 1918-1920 թվականներին բարեկամի կողմից այդ ժողովուրդների տարածքներում ստեղծած մի աղտոտի, Ազգերի լիգայի կողմից այդ տարիներին հենց այդ դատճառով դեռ բուն չճանաչված մի դեռականություն:

Այսդիսով, ղարաբաղյան բախումը իր մերձավոր իրավամարտական հիմքերի տեսակետից կարող է եւ դեռք է որակվի որպես նոսխկին ԽՍՀՄ ազգային-դեռական կառուցվածքի երկու սուբյեկտների ԽՍՀՄ լուծարման ընթացքում ծագած վեճ, որը վերածել է միջազգային զինված բախման: Իր բնույթով ու բովանդակությամբ դա 1918-1920 թվականներին սկսված արեւելյան Այսրկովկասի բնիկ հայերի (ադրբեջանահայության) եւ կովկասյան թաթարների (ադրբեջանցիների) վեճն է երկրատարածքի ազգային-դեռական կառուցվածքի շարջ:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍՈՒԼՈՅԵՆ,
Պրոֆեսոր

ՀՂԿԵՆՔ ՄԵՐ ԽՈՍՔԸ

Հայերենը չունի ո եւ ր տառերով զուգահեռ ձեւեր

Լեզուն որքան մշակված, կանոնավոր ու միասնական է, այնքան լավ է կատարում հասարակական հաղորդակցման միջոցի գործառույթը: Հայերենն այդ տեսանկյունից բավականին բարվոք մակարդակի վրա է: Սակայն հասարակական կյանքի մերօրյա ցնցումները, բազմազանությունը, այլակարծությունն արտացոլվեցին նաեւ լեզվական ոլորտում: Կյանքում գոյացող նոր երեւույթները, անշուշտ, պետք է ստանան իրենց լեզվական արտահայտությունները, անվանումները, եւ դա միանգամայն բնական է: Բայց զարմանալի է ու ցավալի այն, որ դրա հետ մեկտեղ նկատվում են լավագույն ավանդույթների խախտման հակումներ, անտեսվում են կայուն կանոնները, լեզվական հիմնավոր սկզբունքները: Տեսակետների ազատության կարգախոսի ողջի տակ կատարվում են իբր թե նորարարություններ, որոնք հաճախ գիտելիքների դակասի եւ գիտական անփութության արգասիք են եւ, իհարկե, դատապարտված են ձախողման: Եւ որովհետեւ մամուլն ու դպրոցը լեզվի եւ ուղղագրության մշակման գլխավոր գործոններն են, առավել ուշադրության են արժանի այդ բնագավառները: Խնդրո առարկա փաստերը բազմաբնակ են ու անթիվ: Առայժմ անդրադառնանք դրանցից մեկին:

Սամուլի էջերում զանգվածորեն տարածված են բազմաթիվ բառերի զուգահեռ ձեւեր, որոնց մեջ ն-ին նախորդող ո հնչյունը գրվում է թե՛ ո, թե՛ ր տառերով, ինչպես՝ **Կալիֆոռնիա-Կալիֆորնիա, Առնոլդ-Արնոլդ, Լառնակա-Լարնակա, Վեռներ-Վերներ, Բյուռներ-Բյուրներ, Մառնեուլ-Մարնեուլ, սեռալինգ-սերլինգ, կլառնես-կլարնես,** ստորագրվում է ոչ միայն Ադրբեջանի Հանրապետության դեռական-դատարանային համակարգի դատարանների դատավճիռներ, այլեւ դրանց հիման վրա կայացվող դատավճիռներ: Դրանցում ասվում է. «Ադրբեջանի Հանրապետության դեռական-դատարանային համակարգի դատարանների դատավճիռներ, որոնք հիմնվելով Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետության դեռական-դատարանային համակարգի դատարանների դատավճիռների վրա, ուժի մեջ են դրվել Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետության դեռական-դատարանային համակարգի դատարանների կողմից, ենթակա են ճանաչման եւ կատարման Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետության տարածքում»: Ինչպես տեսնում ենք, դատավճիռները ենթակա են ճանաչման եւ կատարման Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետության տարածքում: Ինչպիսի՞ դատավճիռներ: Դրանք ինչպիսի՞ դատարանների դատավճիռներ են: Ինչպիսի՞ դատարանների դատավճիռներ կարող են ճանաչվել եւ կատարվել Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետության տարածքում: Ինչպիսի՞ դատարանների դատավճիռներ կարող են ճանաչվել եւ կատարվել Ադրբեջանի

ՀԱՅԱՍ

Միջազգային

ԼԻԲԵՐԻԱ

Միացյալ Նահանգների աֆրիկյան «տապգում» վերսկսվել է սպանդը

Տարաբ օրվանից Արևմտյան Աֆրիկայի երկրներից մեկի՝ Լիբերիայի մայրաքաղաք Մոնրովիայում վերսկսվել է հաղթական ռազմական գործողությունը, եւ աշխարհի զանգվածային լրատվության միջոցների ուշադրությունը նորից է սևեռվել այդ երկրի վրա: Նրա մայրաքաղաքը Միացյալ Նահանգների նախկին նախագահ Ջիմմի Մոնրոյի անունով է կոչվում, որն ազատություն ստացած ամերիկյան սևամորթ ստրուկների միջոցով է ստեղծել Լիբերիան: 1816 թվականից հիմնադրվել է Գաղութացման ամերիկյան ընկերությունը, որի նպատակն ազատություն ստացած ամերիկյան ստրուկներին Աֆրիկայում վերաբնակեցնելն էր. 1820 թվականին Ամերիկայից Աֆրիկա են բերվել ազատություն ստացած առաջին սևամորթները, որոնք էլ 1824 թվականին հիմնադրեցին Մոնրովիան: 1847 թ-ին գաղութարարները միավորվել ու ստեղծել են Աֆրիկայի առաջին անկախ հանրապետությունը: Սակայն այդ հանրապետությունը չի կարողացել, ինչպես որ նախատեսված է եղել, ծագիսի նման Ամերիկայից սևամորթներին Աֆրիկա ձգել, չնայած Լիբերիայի ասիմանությունը ամերիկացուց է արտագրված, որպես արժույթ ամերիկյան դոլարն է օգտագործվում, իսկ դրոշը ԱՄՆ-ի դրոշի նման աստղաձևավոր է, միայն թե մեկ աստղ է ընդամենը նկարված: Լիբերիան նրանով է նաև հայտնի, որ աշխարհում այժմ բազմաթիվ նավեր են լողում լիբերիական դրոշի ներքո, որոնք, սակայն, այդ երկրի հետ ոչ մի առնչություն չունեն: Ռոդրիկ Լիբերիայի հարկային եւ այլ օրենքներ մեծաթոշ դարձանքներ են առաջարկում նավատերերի համար, որոնք էլ իրենց նավերն իբրեւ լիբերիական են գրանցում: Այդ ամենը սակայն չի օգնել: Միացյալ Նահանգների սեռամորթները, որ հիմա էլ են դեռեւս բազմաթիվ, թե սպիտակամորթներն իրենց ճնշում են, չեն ցանկացել վերադառնալ հայրենի Աֆրիկա ու այնտեղ բնակվել: Լիբերիայի 5 տոկոսն է միայն, որ Ամերիկայից եկած գաղութարարների ժառանգներն են: Դեռեւս գլխ մեկը գեներալ Չարլզ Թեյլորն է, որը Լիբերիայի նախկին նախագահ Սեմյուել Դոուի կառավարման ժամանակ խոշոր մասակարար էր եւ Լիբերիայից փախել էր Միացյալ Նահանգներ, երբ ոչնչական գույքի հափշտակման մեղադրանք էր իրեն ներկայացվել: Մասաչուսեթս նահանգում ամերիկյան իշխանությունները նրան ձերբակալել են ու ցանկացել են վերադարձնել Լիբերիա, սակայն Թեյլորին հաջողվել է փախչել ամերիկյան բանտից: Նա վերադարձել է Աֆրիկա ու Լիբիայի աջակցությամբ աշխարհազոր է կազմակերպել Լիբերիայի այն ցեղախմբերից, որոնք Կրան ցեղին պատկանող նախագահ Դոուի կառավարման ժամանակ սարսափելի հալածանքների են ենթարկվել: 80-ական թվականների վերջերին Թեյլորը պատերազմ է սկսել Դոուի հետ եւ հիշ է մնացել գրավի մայրաքաղաք Մոնրովիան, սակայն նրան կանգնեցրել է Արեւմտյան Աֆրիկայի երկրների խաղաղարար ուժերի զորամիավորումը, որի կորիզը նիգերիացիներն էին: Դրանից հետո մի քանի մրցակից խմբավորումների միջեւ Լիբերիայում անկայուն հավասարակշռություն է ստեղծվել: Եվ չնայած 90 թվականին նախագահ Դոուն գերի է վերցվել ու տանջվամբ սպանվել, գեներալ Թեյլորի մրցակիցների բերդը չի դարձել, ու քաղաքացիական պատերազմը երկրում ժամանակ առ ժամանակ նորից է վերսկսվել: Անցյալ տարվա օգոստոսին Լիբերիայի 7 գլխավոր խմբավորումների դեկավարներին հաջողվեց հրադադար հայտարարել ու դադարեցնել, որ 96 թվականին համընդհանուր ընտրություններ լինեն: Հաջողվել է նույնիսկ ժամանակավոր կառավարություն ստեղծել, որում գյուղի տնտեսական զարգացման նախարարի պատասխանը լիբերիական բեռնակի նախկին շարքային զինվոր, Կրան ցեղախմբի ներկայացուցիչ Ռոդրիկ Ջոնսոնին է վստահվել: Վերջերս սակայն, Կրան պատերազմող են արել ու սպանության մեջ մեղադրել, որից հետո նա իմնանձիգներով նոնականերով զինված իրեն հավատարիմ զինյալներով բաժանվել է սեփական տան մեջ: Հարյուր օր Թեյլորի զինվորներ գրավել են Ջոնսոնի տունը: Համաձայն մեկ այլ վարկածի, ընդհակառակը, Ջոնսոնի գրոհայիններն են առաջինը հարձակվել Թեյլորի մարդկանց վրա, լիբերիական բաղաքացիական պատերազմը, որն արդեն 150 հազար կյանք է խլել, նորից է վերսկսվել: Ռոդեզի աղետավոր իրենց կյանքը, Ջոնսոնի զինյալները, որոնք Լիբերիայի չափանիշներով են նույնիսկ սականներ համարվում, բազմաթիվ պատանդներ են վերցրել, այդ թվում նաև արտասահմանցիների: Մոնրովիայում բազմաթիվ անձեր բաղաքացիներ են զոհվել, եւ բազանվել են հազարյուր բոլոր խանութներն ու ծերակալները: Երեքշաբթի օրվա անգլիական «Թայմս» հայտնում է, որ բաղաքից տասնյակ հազարավոր մարդ է փախել կամ էլ բաժանվել դեղատանատներում: Թերթը վկայում է, որ բոնությունների այդպիսի ալիք Լիբերիան 3 տարի չէր տեսել: Նույն օրվա անգլիական «Գարդիան» թերթի թղթակիցը գրում է, որ Մոնրովիայի բնակիչների համար կարեւոր չէ, թե ով է կռվում եւ ինչի համար, բանի որ հակամարտող խմբերի զորամասերն իրարից շատ քիչ են տարբերվում, բոլորն էլ տարիքով 25 տարեկանից մեծ չեն, սակայն զինված են եւ գործադրության տակ են գտնվում: «Գարդիանի» թղթակիցը հայտնում է նաեւ, որ Մոնրովիայի փողոցներում ընկած դիակների մի մասը սարսափելի ձեւով այլանդակված է, կարծես այդ զորամասերը ոչ թե մարտում են զոհվել, այլ դաժան մահապատժի են ենթարկվել: Երեքշաբթի օրվա «Նյու Յորք թայմս» նկարագրելով Ռոդրիկ Ջոնսոնի զորամասերին, հայտնում է, որ նրա հրամանատարներից մեկը սովորություն ունի մերկանալ, մարմնը փայտի ածուխով սեւացնել ու այդպիսի տեսքով Մոնրովիայի փողոցներով վազվզել:

Չնայած ԱՄՆ-ի քաղաքացիների համար ոչ մի ռնգիություններ չեն եղել, նրանք օդային շտաբ էվակուացիա են սկսել: Սա վերջին տարիներին ամերիկացիների արդեն երրորդ էվակուացիան է: 90 թվականին 360 ամերիկացիներ ու բազմաթիվ այլ արտասահմանցիներ օդային ճանապարհով դուրս են բերվել Լիբերիայից, իսկ 92 թվականին, երբ Մոնրովիայում նորից են մարտեր սկսվել, C130 ռազմա տրանսպորտային ինքնաթիռներով 170 ամերիկացի է էվակուացվել: Լիբերիա են բերվել ԱՄՆ-ի մի քանի հարյուր ծովային հետեւակայիններ, որոնք պետք է ապահովեն ԱՄՆ-ի դեսպանատունը: ՄԱԿ-ի ԱԽ-ի եւ Բուտրոս Ղալիի զգուշացումից ու ամեն տեսակի օգնությունից զրկելու սպառնալիքից հետո, չորեքշաբթի օրը Մոնրովիայում իրադարձություններ տեղի ունեցան: Դեռ 1993 թ. Գենեւայի եւ Իսլամի պատվիրակությունները փորձել էին Լոնդոնում Իսրայելի գործերին չմիջամտելու կոչ անել բարձրացնել «իսրայելական բանկի ոսկու պաշարների» դնելու վայրի հարցը: Մոսկվան իր ներկայացուցիչ Ի. Մայսկուն անհապաղ պատվիրել էր «վճռականորեն առարկել Լոնդոնի կոմիտեում իսրայելական ոսկու հարցի քննարկման դեմ»:

«Իսրայելական ոսկին» էապես հարվածեց խորհրդային Միության ոսկու պաշարը, որը միայն 90-ական թթ. սկզբներին գաղտնազերծված տվյալների համաձայն, 1953 թ. կազմել էր գրեթե 2050 տոննա: Ի դեպ, «առաջնորդի» իրավահաջորդներն ասիմանաբար վաստեցին այդ պաշարը: ԽՍՀՄ-ի փլուզման պահին այն չէր անցնում 140 տոննայից:

«ՍՊՈՒՏՆԻԿ Ի ՏԱԿՏ»

ՀԱՄԱՌՈՏ

Համբավի մասնագետը օգնեց Ելցինին

Չինգաբթի օրվա «Financial Times» թերթը հայտնել է, որ վերընտրվելու իր պայքարում Բորիս Ելցինին օգնության է եկել քաղաքական հանքաբաշխ ստեղծող բրիտանական մասնագետ Թիմ Բելը: Ժամանակին նա կարողացել է բարձրացնել բրիտանական վարչապետ Թեչերի վարկանիշը: Ըստ թերթի տվյալների, Թիմ Բելի հանձնարարությամբ մի հեռուստահաղորդում է եղել TNB հեռուստաալիքով, որտեղ Նատինա Ելցինան գովել է իր ամուսնու արժանիքները: Նատինայի սրտառուչ պատմությունն այն մասին, թե ինչպես է Բորիսը ափսեներ լվանում ու պելմենի պատրաստում, հիշեցրել է Թեչերի անձնական կյանքի մասին պատմող հեռուստաակնարկը: Ինչպես ցույց են տվել Ռուսաստանի վերջին հարցախույզները, ընտրարշավի լավ ռեժիսուրան ու մի քանի տպավորիչ քաղաքական ժեստերը զգալիորեն ավելացրել են Ելցինի վարկանիշը:

Ռուս լրտեսները վերադառնում են Անգլիա

Մեծ Բրիտանիայի MI-5 հետախուզական ծառայության վերջին զեկուցագրերից մեկում այն եզրակացությունն է արվում, որ ռուս լրտեսները վերադառնում են Անգլիա, եւ Մոսկվան ակտիվացնում է իր գործունեությունը: Սա լրջորեն անհանգստացնում է Լոնդոնին, թեեւ, այնուամենայնիվ, երկու հարաբերությունները գլխավոր սպառնալիք է դիտվում իրավապահների ահաբեկչությունը:

Պանաման ձգտում է ներդրումներ ստանալ Ֆրանսիայից

Պանամայի նախագահ Էռնեստո Պերես Բալլադարեսը արդեն 15-ին եւ 16-ին Փարիզում հանդիպումներ կունենա Ֆրանսիայի ձեռնարկատերերի հետ եւ կփորձի նրանց համոզել ներդրումներ կատարել Պանամայում: Տոքիոյի եւ Քարտերի կնքած պայմանագրի համաձայն, Պանամայի ջրանցքի երկայնքով տեղաբաշխված ամերիկյան 8 հենակետերի զինվորները պետք է երկրից հեռանան 1999 թ. վերջերին: Այսպիսով, կազատվեն 14 հազար հեկտար գբաղեցնող հողեր, դանավակայաններ, ճանապարհներ, հիվանդանոցներ եւ այլ կառույցներ, որոնց գինը կազմում է մի քանի միլիարդ դոլար: Պանաման ուզում է վաճառել այդ ենթակառույցները եւ ներդրողներ գտնել 8 հազար ամերիկացիների մեկնումից հետո ստեղծվելիք դատարկությունը լցնող տնտեսական գործունեություն ծավալելու նպատակով: Դրա համար Պանաման փաստաթղթեր ունի: Նրան է պատկանում աշխարհում առաջին առեւտրական նավատորմը, երկիրն ունի հարկային նպաստավոր համակարգ եւ աշխարհագրական հիանալի դիրք:

«ԷՔՍՊՐԵՍ»

Գ-ՐՈՅ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅՈՒԹ ԳՈՐԾԱՐՔԵՐԸ

Իսպանական «ոսկե բարավանի» գաղտնի ուղին

Ստալինի օրոք ԽՍՀՄ ոսկու պաշարի մեկ քառորդը բերվել է Մադրիդից

Գեներալ Ֆրանկոյի գլխավորած զինվորական խռովությունը Իսպանիայում սկսվեց 1936 թ. նոյեմբերի 17-18-ին: Խռովության տարածման արագությունը, իշալա-գերմանական անմիջական ներխուժման վտանգը, ինչպես նաեւ Անգլիայի, Ֆրանսիայի եւ ԱՄՆ-ի ընդգծված անտարբեր դիրքորոշումը Իսպանիայի հանրապետական կառավարությանը ստիպեցին ռազմական օգնություն խնդրել ԽՍՀՄ-ից:

Պիրենեյան թերակղզում բռնկած պատերազմի առաջին երկու ամիսներին Եւրոպան բավական սառն էր արձագանքում խորհրդային զենք մատակարարելու հանրապետականների համար բախտաճանաչներին: Իսպանիայի գործերին չմիջամտելու հռչակագրին միացած Ստալինը սակնհայտորեն չէր ուզում ուղղակի հակամարտության մեջ մտնել Հիտլերի եւ Մուսոլինիի հետ: Բացի դրանից, առաքումները կարող էին իրականացվել միայն ծովով, իսկ դա հղի էր բեռների կալանման վտանգով:

Սակայն 1936 թ. սեպտեմբերի 29-ին ՀԱՄԿԲՄ-ի կենտրոնի քարտուղարն անսպասելիորեն որոշում ընդունեց հանրապետականներին լայնածավալ օգնություն հասցնելու մասին: Այդ ժամանակ գեներալ Ֆրանկոյի զորքերը ընդամենը մոտեցել էին Մադրիդին: Իսպանիայի հանրապետության կառավարությունը ԽՍՀՄ կառավարությանը խնդրեց ի դեպ ընդունել երկրի ոսկու պաշարի երեք քառորդը՝ մոտ 510 տոննա: Խիստ հավանական է, որ հենց նման բանկարժեք գրավ ստանալու հեռանկարը Մոսկվային դրդած լիներ այնուամենայնիվ առավել ակտիվ դիրք բռնել Իսպանիայի հարցում:

Մադրիդից ոսկին 7800 արկղերով (յուրաքանչյուրում 65 կգ) տեղափոխվեց Կարտաֆենա նավահանգիստ: Այն բեռնեցին խորհրդային յուրաքանչյուր նավերի՝ «Նեւայի», «ԿԻՍ»-ի, «Կուբանի» եւ «Վոլգոյեսի» վրա: «Ոսկե բարավանը» ուղղվեց Օդեսա, ըստ որում նավերից յուրաքանչյուրը գնում էր սեփական երթուղով: Օդեսայի նավահանգստում ոսկով լի արկղերը բեռնեցին վագոնները եւ հատուկ գնացքով փոխադրեցին Մոսկվա: Բեռը ԽՍՀՄ Ֆինանսների ժողկոմ հասցվեց 1936 թ. նոյեմբերի 6-ին: Այդ պահից հանրապետական Իսպանիան իր ոսկու հաշվին էր վճարում խորհրդային ռազմական մատակարարումները, ԽՍՀՄ-ում ժողովրդական բանկի մասնագետների ուսուցումը, խորհրդային զինվորական խորհրդականների ծառայությունները:

Մի կարեւոր մանրամասնություն. արխիվային փաստաթղթերում խորհրդային կողմը պարտավորվում էր «տանկերն ու օդանավերը մատակարարել անձնակազմերով»: Հայտնի է, որ Իսպանիայում 1936-1939 թթ. սպանվել, խեղվել կամ անհետ կորել են հայրենավոր «խորհրդային կամավորներ»:

1939 թ. մարտին Իսպանիայի հանրապետությունը վերջնականապես պարտություն կրեց, կառավարությունը տարհվեց Մեխիկա: Մինչ այդ ԽՍՀՄ-ը հասցրել էր Պիրենեյան թերակղզի առաքել 500 հազար տոննա գենք, զինամթերք եւ այլ նյութեր: Խորհրդային դասախոսները ժողովրդական բանակի համար պատրաստել էին մոտ 20 հազար մասնագետ: Ըստ էության ոսկին ծախսվել էր արդեն 1935 թ.:

Տասնամյակներ շարունակ ԽՍՀՄ-ում «իսպանական ոսկու» հետ կապված ամեն ինչ համարվում էր գաղտնի: Հայտնի է, որ գործողության մասնակիցներից շատերին հետագայում դիտակահարել են: Դեռ 1937 թ. Գերմանիայի եւ Իտալիայի պատվիրակությունները փորձել էին Լոնդոնում Իսրայելի գործերին չմիջամտելու կոչ ենթադրել բարձրացնել «իսրայելական բանկի ոսկու պաշարների» դնելու վայրի հարցը: Մոսկվան իր ներկայացուցիչ Ի. Մայսկուն անհապաղ պատվիրել էր «վճռականորեն առարկել Լոնդոնի կոմիտեում իսրայելական ոսկու հարցի քննարկման դեմ»:

«Իսրայելական ոսկին» էապես հարվածեց խորհրդային Միության ոսկու պաշարը, որը միայն 90-ական թթ. սկզբներին գաղտնազերծված տվյալների համաձայն, 1953 թ. կազմել էր գրեթե 2050 տոննա: Ի դեպ, «առաջնորդի» իրավահաջորդներն ասիմանաբար վաստեցին այդ պաշարը: ԽՍՀՄ-ի փլուզման պահին այն չէր անցնում 140 տոննայից:

«ՍՊՈՒՏՆԻԿ Ի ՏԱԿՏ»

digitised by A.R.A.R.@

ԱՀԳ

Մշակույթ

«Մոսկվան» արցունքների չի հավատում

Կինոթատրոնը 60 տարեկան է

Երեւան քաղաքի կենտրոնում 2 եկեղեցի կար Ս. Գրիգոր Լուսավորիչ եւ Ս. Պողոս-Պետրոս, որոնց հանդված հիմքի վրա վեր խոյացավ Չարենցի անունը կրող դպրոցը եւ «Մոսկվա» կինոթատրոնը: Արբաղոնություն էր կատարվածը. ժամանակի հրամայական կոչված «կարմիր» արարք, պատմաբանները. խելացի այրերը մելանով արձանագրել են դա: Իսկ մենք Երեւանի փողոցներից Աբովյանն առանձնացնելով կինո «Մոսկվան» սիրում ենք այդ հիշողությունն առած չլինելով: Ու միայն տեսը. ու միայն փայլը. գույնզգույն ազդագրի վահանակները. հերթերը. տոմս ձարելը. փառատոները. ձանձրացած մարդկանց շատ մոտիկից կողքից տեսնելը... մեզ համար հարազատ հասցե է այսօր 60 տարեկան դարձած «Մոսկվա» կինոթատրոնը:

Սեպտեմբերաբերեռնան ալիքը հանդիսատեսին տարակուսելու տարիք տվեց միգուցե Կոմիտաս կինոթատրոնի նման տա էլ ավտոտաքի նման մի բա՞ն դառնա: «Այդքիսի բան չի կարող լինել», վստահ ասում է տնօրեն Մարտին Աղոյանը: 91-ից երկարաժամկետ վարձակալության են անցել, եւ հիմա կինոթատրոն «Մոսկվան» սահմանափակ դատախազությամբ բնակություն է. հիմնադիրը 70 հոգանոց կոլեկտիվը:

Այսօր լեգոն դահլիճներ դժվար է գտնել: Կինո գնալու ժամանա՞կ չկա. հետաքրքրությո՞ւն, թե՞ փող: Երեւանցուն հարցնելու լինես, հիասթափությունի երեկոյան Արաքսի դեր դժվար թե գիրգնահատի. էներգետիկ ճգնաժամ է:

Լեփ-լեցուն դահլիճ վերջին անգամ ե՞րբ եք տեսել հարցին 1991-ից տնօրեն որն Աղոյանը հիշատակում է 94-ին ցուցադրված ֆիլմերը «Քաղաքի Լոս Անջելեսից» (Հայֆիլմ), «Անիծվածներ» (Հայֆիլմ), «2 լուսինների միաձուլումը» (ԱՄՆ) եւ «Դառը լուսին» (ԱՄՆ):

Տնօրենությունն այն կարծիքին չէ, թե տոմսի արժեքը բարձր է: Չնայած, իմ հարցումներին դատասխանող մարդիկ հարկ համարեցին հիշեցնել, որ հայերը մենակ կինո չեն գնում. ընտանիքով կինոդիտման գնալն ամենի՞ գրպանի տեսադահլիճը:

«Մոսկվա» կինոթատրոնը գործում օգախ է, գոմի տեսքից հետո, միշտ մաքուր, մեր գույնին միջամտում է կինոռեժիսոր Դոն Ասկարյանը. որի ֆիլմերը շուտով այստեղ են ներկայացվելու: Դասական կինոդիտման ձեւն այստեղ դատանվում է»: կարեւորում է գեղանաբնակ կինոռեժիսորը: Չմոռանանք, որ երեւի սա միակ կինոթատրոնն է, որտեղ 35 տարի է՝ «Հիսդատեր» կոչված էլ, «Էլիտարն» էլ, մերժում են դոտոնֆիլմերը: «Դրանց՝ շատ հանդիսատես գրավելու գայթակղությունն ինձ համար չէ. երբ նայում, ամաչում եմ»: Մարտին Աղոյանը բացատրում է, թե ինչու մաքուր արվեստ «էլիտար» ֆիլմ չեն կարող ցուցադրել ամեն օր: «Դրանք մեր կինոնկրանին դարբերաբար տեղ կունենան, բայց չենք կարող 4-5 հանդիսատեսի համար, ասենք, Տարկովսկի 10 օր շարունակ ցուցադրել: Աշխատում ենք ինքնաֆինանսավորմամբ, մշակույթի մասին մտածելով դիտի մտածենք նաեւ աշխատավարձ տալու մասին»: Տնօրենի ասելով, ցուցադրում են «Հիսդատեր» կոչված էլ, «Էլիտարն» էլ, մերժում են դոտոնֆիլմերը: «Դրանց՝ շատ հանդիսատես գրավելու գայթակղությունն ինձ համար չէ. երբ նայում, ամաչում եմ»: Մարտին Աղոյանը բացատրում է, թե ինչու մաքուր արվեստ «էլիտար» ֆիլմ չեն կարող ցուցադրել ամեն օր: «Դրանք մեր կինոնկրանին դարբերաբար տեղ կունենան, բայց չենք կարող 4-5 հանդիսատեսի համար, ասենք, Տարկովսկի 10 օր շարունակ ցուցադրել: Աշխատում ենք ինքնաֆինանսավորմամբ, մշակույթի մասին մտածելով դիտի մտածենք նաեւ աշխատավարձ տալու մասին»: Տնօրենի ասելով, ցուցադրում

ցուցադրում:

«Տեսաֆիլմերի առատությունը չոչնչացրեց խանգարի, որ մեր կինոթատրոնը ավանդական կինոդիտման կողմնակից մնա», ասում է դրն Աղոյանը՝ հիշեցնելով, որ 1992-ին կինոթատրոնը ցուցադրել է 150, 93-ին 86, 94-ին 85, 95-ին 67, 96-ի առաջին եռամսյակին 15 տարբեր ժանրի, տարբեր ռեժիսորների ֆիլմեր: Տնօրենի ասելով, ցուցադրում

«Մոսկվան» արցունքների չի հավատում

Կինոթատրոնը 60 տարեկան է

Երեւան քաղաքի կենտրոնում 2 եկեղեցի կար Ս. Գրիգոր Լուսավորիչ եւ Ս. Պողոս-Պետրոս, որոնց հանդված հիմքի վրա վեր խոյացավ Չարենցի անունը կրող դպրոցը եւ «Մոսկվա» կինոթատրոնը: Արբաղոնություն էր կատարվածը. ժամանակի հրամայական կոչված «կարմիր» արարք, պատմաբանները. խելացի այրերը մելանով արձանագրել են դա: Իսկ մենք Երեւանի փողոցներից Աբովյանն առանձնացնելով կինո «Մոսկվան» սիրում ենք այդ հիշողությունն առած չլինելով: Ու միայն տեսը. ու միայն փայլը. գույնզգույն ազդագրի վահանակները. հերթերը. տոմս ձարելը. փառատոները. ձանձրացած մարդկանց շատ մոտիկից կողքից տեսնելը... մեզ համար հարազատ հասցե է այսօր 60 տարեկան դարձած «Մոսկվա» կինոթատրոնը:

ՆՅՈՒ ՅՈՐՔ

Մստիսլավ Ռոստրոպովիչի կյանքի ամենաերջանիկ օրը

Չորեքշաբթի օրը Նյու Յորքում արեւոտ առավոտ էր եւ աշխարհահռչակ երաժիշտ Մստիսլավ Ռոստրոպովիչն էլ մանկան դեռ երջանիկ էր: Նա գույնզգույն տուփերից հանում էր կոմոդակտ դիսկեր եւ 2 լեզուներով բացականչելով «Սա իմ կյանքի ամենաերջանիկ օրն է», ցարդում էր դրանք: Դեռքը «Սալիվան եւ Քրոմվել» փառատաանական գրասենյակում է տեղի ունեցել, որի փառատաանները հարթանակել էին 2 տարի տեւած դատավարությունում: Ռոստրոպովիչին ու նրա հյուրերին ծանր աշխատանք էր սպասվում: Նրանք դեռ է ջարդեին շուրջ 7 հազար կոմոդակտ դիսկեր, որոնք չկամությամբ էին կատրվում, քանի որ շատ ճկուն էին: Այդ արարողության ընթացքում աշխարհահռչակ երաժիշտը ներկաներին (որոնց մեջ էր նաեւ նրա Օլգա դստեր ամուսին Օլեգ Հերմեսը, որը «Հերմես» ընկերության սեռիականաշիրոջ որդին է), բացատրելով միջոցառման իմաստը դատեց հետեւյալը. «Խոսքն իմ դիսկերի մասին է, որոնք ինձանից գողացել է Օրթեյանը, մի գործիչ, որը «Ռաշն դիսկ» ընկերությունն է հիմնել ու առանց ինձանից թույլտվություն ստանալու, առանց նույնիսկ ինձ հետ շփման մեջ մտնելու թողարկել է իմ 10 դիսկերը: Նա թողարկել է այն, ինչը կարող էր եւ արդեն իջեցրել է երաժշտի իմ համբավը. որովհետեւ բոլոր այդ ձայնագրություններն էլ ավազակային ձեւով են արվել: Խորհրդային տարիներին մենք գալիս էինք համերգի եւ տեսնում, որ բեմի վրա խոսափող կա դրված: Մենք ոչինչ չէինք կարող ասել, իրավունք չունեինք: Ձայնագրված բոլոր ժապավենները արխիվ էին գնում: Այժմ ազատություն է, ու արխիվներից դրանք հանել գողացել են: Եւ ահա, Օրթեյանը Լոս Անջելեսում լույս է ընծայել իմ 10 դիսկերը: Ես նրան դատի էի տվել, քանի որ երբ համերգից հետո առաջին անգամ ինձ մոտ եկան եւ խնդրեցին դիսկը մակագրել, ես սարսափեցի, երբ տեսա, թե ինչ եմ նվագում այդ դիսկում: Բանն այն է, որ խորհրդային տարիներին ես ոչ միայն այն ստեղծագործություններն էի նվագում, որոնք ցանկանում էի նվագել, այլ նաեւ այնպիսիները, որոնք դեսի է նվագեի: Ահա թե ինչ իմաստով. Ասենք, դաշնակային մի երգահան ինձ է նվիրում իր նոր ստեղծագործությունը եւ այն ուղարկում է ինձ: Ես չեմ զղջում, որ այն նվագում եմ, սակայն չեմ ցանկանում, որ այն տարածվի»: Ներկա գտնվող BBC-ի թղթակից Կոզլովսկու օրինակ բերելու խնդրանքին Ռոստրոպովիչը Տիխոն Խրենենիկովի համերգն է նշել, ասելով, որ ինքը ճիշտ չի համարել դրա տարածումը աշխարհով մեկ եւ չի ձայնագրել այն ձայնասկավառակների վրա. «Այժմ մենք դրանք կգտնենք ու կկոխշնենք», ասել է հռչակավոր երաժիշտն ու գործի անցել:

ԳՐԻԳՈՐ ԷՄԻՆ-ՏԵՐՅԱՆ

ՀՈԲԵԼՅԱՆ

Արմեն Հովհաննիսյանը 30 գումարած 30 տարեկան է

«Մենք սոնրագրությունից սկսեցինք կարդալ նրա հոդվածները» (Ասողիկ Գեւորգյան), «լճացման տարիներին խստավարար ժուռնալիստի կերպար ուներ, հեղափոխության ժամանակ հավերժական արժեքների պահապանն է: Արտիս ու էսքես. հեռուստատեսային բոլոր էֆեկտներից շատեց մարդու՝ հերոնական էֆեկտը» (Պավիր Սուրադյան), «երկաթե վարագույրի հետեւից արտասահմանյան մշակութային արժեքներ բերեց մեր ափերը» (Լավրենտի Բարսեղյան), «հրապարակախոսական ժանրում անփոթելի ոճ ստեղծեց» (Ժրունգե Դովլաթյան), «երեւանցի աղջիկներս նրան ծիկրակելով կին դարձանք» (Ալվարդ Պետրոսյան):

«Շափազանցություններ օրն է պարտադրում», իր հոբելյանական երեկոյին, որ տեղի ունեցավ երեկ ժուռնալիստի տանը եւ ուղեկցվեց ջերմ շնորհավորանքներով, համերգային մասով, կարմիր գինու հյուրասիրությամբ, ասաց Արմեն Հովհաննիսյանը:

Ես ինչպե՞ս գրեմ, որ նա 60 տարեկան է, երբ նրան ճանաչողները, դասընկերները, գրչակիցները հանդգնված ասում են, թե նա՝ ուր, վաքտ՞ւնն ուր: Հոբելյանական նվերների շարքում թե՛ գրիչ կար, թե՛ երիտասարդ, թե՛ ծեր-

նաեղբա (հաղթանտարկյալների խորհրդի նվերը), ծաղիկներ ու երեւանի, նաեւ՝ Դարաբաղի ամենագեղեցիկ կանանց ժպիտները: Եվ քանի որ օրն ավարտվում էր, իսկ երեկոն դեռ հիշողությունների, մաղթանքների կծիկը տարանալով բացում, շարունակությունը՝ հաջորդիվ:

ՄԱՇԿԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Հայկական ճարտարապետությունը ցուցահանդեսում

Հայ ժողովրդի ոգեղեն միտքն ու ճարտար ձեռքը դարեր շարունակ, ի թիվս արվեստի այլ տեսակների, ստեղծել է ճարտարապետական այնպիսի կոթողներ, ինչպիսիք են Զվարթնոցն ու Էջմիածինը, Հաղպատն ու Սանահինը, Տաթեւն ու Գանձասարը... Սրանց կողքին նաեւ բնակելի տներ, կամուրջներ, խաչքարեր ու շատրվաններ:

Նոր շրջանում Ալեքսանդր Թամանյանի, Մարկ Գրիգորյանի, Ռաֆայել Իսրայելյանի, Գրիգոր Ազարբաբյանի եւ ուրիշ տաղանդավոր ճարտարապետների նախագծերով կառուցվեցին Կառավարական տան, Մատենադարանի, Գեղագույն խորհրդի, «Մոսկվա» կինոթատրոնի, օդանավակայանի, մարզահամերգային համալիրի ու ուրիշ մշակութային, կրթական, արդյունաբերական շենքեր:

Հայկական ճարտարապետությունը նվիրված բազմաթիվ գրքերից Հայաստանի Ազգային գրադարանում կազմակերպված ցուցահանդեսում ներկայացված են «Հայկական արվեստ, հ. 1, 2», Վ. Հարությունյանի «Հայ ճարտարապետության պատմություն», Շ. Մկրտչյանի «Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները», Ա. Այվազյանի «Նախիջեւանի կոթողային հուշարձանները եւ պատկերահանդակները», Ի. Էլլարյանի «Աղստեւի հովտի պատմական հուշարձանները», նաեւ Ն. Բունիաթյանի, Կ. Հովհաննիսյանի, Յու. Թամանյանի աշխատությունները, «Սովետական Հայաստանի ճարտարապետական հուշարձանները» ալբոմը եւ ուրիշ նյութեր:

Ցուցահանդեսի տարածքի սահմանափակ լինելու պատճառով ցավոք, չեն ցուցադրվել Թ. Թորամանյանի «Նյութեր հայ ճարտարապետության պատմության» մեծադիր երկհատորյակը, «Հայկական սովետական հանրագիտարանի» համառատասխան հատորը եւ այլ գրքեր:

ՀՐԱՉՅԱ ՀՈՒԼԱՆՅԱՆ

ՀԱՄԵՐԳԱՍՐԱՀ

«Մասնավոր» երաժշտական փառատոն Մոսկվայում

Մոսկվայում բացվել է ժամանակակից երաժշտության երրորդ միջազգային փառատոնը, որը նախկինում կոչվում էր «Սոֆյա Գուբայդուլինան եւ նրա բարեկամները»: Այս տարբերությունը Մոսկվայի կոնսերվատորիայի դահլիճներում հնչում են Սոֆյա Գուբայդուլինայի, Գիա Կանչելիի, Ասոր Պյացցոլլայի ստեղծագործությունները աշխարհահռչակ երաժիշտներ Գիդոն Կրեմերի, Վլադիմիր Տոնխայի, Վադիմ Սախարովի, Մարկ Պեկարսկու կատարմամբ:

Փառատոնի կազմակերպիչը՝ ակադեմիական երաժշտության հայտնի դրոդյուսեր Վադիմ Դուբրովիցկին, հայտնեց, որ այս տարի փառատոնը կազմակերպվում է մասնավոր կարգով: «Անցյալ տարվա դատմությունը չի կրկնվի, երբ կազմակերպիչների ցանկում նշված էր նաեւ Մոսկվայի կառավարությունը, որը փառատոնի հաշվին այդպես էլ ոչ մի կոդեկ չփոխանցեց, դատարաբանում է Վադիմ Դուբրովիցկին: Կառավարությունը ժամանակ չունի զբաղվելու ժամանակակից դասական երաժշտությամբ. ո՞ւմ է այն հարկավոր: Մենք գտնում ենք, որ հարկավոր է, եւ որ անհրաժեշտ է այն իրավիճակը, երբ աշխարհահռչակ ստեղծագործողների անունները Ռուսաստանում ավելի ու ավելի հազվադեպ են հիշատակվում»:

Փառատոնի գաղը վերջերս մահացած արգենտինացի կոմպոզիտոր Ասոր Պյացցոլլայի ստեղծագործություններից կազմված համերգային ծրագիրն է: 300-ից ավելի տանգոներ, բազմաթիվ ֆիլմերի երաժշտության հեղինակը երկու տարում միանգամից հանրահայտ դարձավ Ռուսաստանում: Նրա երաժշտության հիման վրա բեմադրվում են բալետներ, նրա երկերով հեռուստաֆիլմեր են ձեւավորվում:

Փառատոնի շրջանակներում տեղի ունեցավ մի հրաշալի «ոչ երաժշտական» դրեմիերա: Գիդոն Կրեմերը նեկայացրեց իր առաջին գրական փորձը՝ «Սանկության բեկորներ» ինքնակենսագրական արձակ գործը, որը ոուսերեն է բարգմանված գերմաներենից:

Վադիմ Դուբրովիցկին հայտարարեց, որ ինքը Մոսկվայի հետ առանձնապես մեծ հույսեր չի կապում: «Մոսկվան հրաժարվում է բարձրաշխարհիկ կյանքով եւ հետու է մշակույթից: Ուզենք թե չուզենք, այսօր հոգեւոր կյանքում գլխավոր իրադարձությունները տեղի են ունենում այսպես կոչված գավառում: Մինչդեռ Մոսկվան ակնհայտորեն վերածվել է Ռուսաստանի մշակութային գավառի. այստեղ այսօր բեմադրում են ներկայացումներ, կազմակերպում համերգներ, որոնք երկրի ամենահեռավոր անկյուններում անգամ դարգաղես սուլոցներով կընդունվեին», ասաց նա:

Նրա կազմակերպած ժամանակակից երաժշտության «մասնավոր» միջազգային փառատոնը թերեւս կմնա միակ հանրաճանաչ դեպքը, երբ հանրությունը ոչ միայն չի հրաժարվել դրանից, այլ ավելի ակտիվ է դարձել:

«ՊՈՎԵՍՏԻ»

ՀՀ ԳԱՎԱԹ

«Արարատ»-«Ղարաբաղ» հանդիպումը հարցականի տակ

ՍՈՒՐԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Այսօր, ըստ օրացույցի, նախատեսված է ՀՀ գավաթի խաղարկության քառորդ եզրափակիչի դասական երկու հանդիպում: «Փյունիկը» Արարատում մրցելու է «Ցենտրի» հետ, իսկ Երևանի «Արարատը» հարաբերությունները դեռ է կարկին պարզի «Ղարաբաղի» հետ: Այս հանդիպումը նախատեսված էր «Հրազդան» կենտրոնական մարզադաշտում: Սակայն երեկվա անձրևից հետո մինչև այսօր դարձ չէ, թե որտեղ է կայանալու հանդիպումը: Ընդ որում ասենք, որ խաղը ծրագրված է ցուցադրել հայկական հեռուստատեսությամբ: Այնպես որ, անորոշ վիճակ է ստեղծվել նաև ՀՀ պետական հեռուստաընկերության գլխավոր խմբագրության համար: Հիշեցնենք, որ առաջին խաղում, որը տեղի ունեցավ Կուպանում, 31 հաշվով հաղթեց «Արարատը»: Ըստ գործող կանոնակարգի, դաշտի տերը, տվյալ դեպքում «Արարատը», պարտավոր է աղահովել խաղադաշտով: Եթե ինչ-ինչ պատճառներով խաղը չկայանա, առա բիմին պարտության կգրանցվի 0-3 հաշվով: Իսկ դա նշանակում է, որ «Արարատը» հրաժարվում է գավաթի խաղարկությանը: Հուսանք, որ գործը դրան չի հասնի և խնդիրը կկարգավորվի: Համենայն դեպս, երեկ հավասի աղբյուրից ստացված տեղեկատվության համաձայն Արմավիրի և Արտաշատի մարզադաշտերը հրաժարվել են ընդունել բիմերին:

Հատկապես հսկայական հետաքրքրություն է առաջացնում «Ցենտրի»-«Փյունիկ» խաղը: Երևանում տեղի ունեցած առաջին մրցավեճում «Փյունիկը» հաղթել է 2-0 հաշվով: Կրավարարի՞ արդյոք 2 գնդակի առավելությունը առաջնության առաջատար «Փյունիկին» դուրս գալու նաև գավաթի խաղարկության քառորդ եզրափակիչ: Համենայն դեպս «Ցենտրը» միշտ ոգեորությամբ է հանդես գալիս իր խաղադաշտում և ուժեղ կազմ ունեցող «Փյունիկի» համար հետաքրքրվեճ չի լինի: Տեղեկացնենք, որ 2 հանդիպումներն էլ պետք է սկսվեն ժամը 16-ին: Վաղը Աբովյանում կայանալու է քառորդ եզրափակիչի վերջին հանդիպումը: «Կոտայքը» հյուրընկալելու է «Վանին»: Առաջին խաղում 1-0 հաշվով հաղթել է «Վանը»:

Հիշեցնենք, որ առաջինը կիսաեզրափակիչի ուղեգիր է ձեռք բերել «Շիրակը», որը 2 հանդիպումների արդյունքներով առավելության է հասել «Երևանի» նկատմամբ:

ՊՈՊՐԼԳ

Նոր զենամիջոցներ արգելված դեղամիջոցներ օգտագործող մարզիկների նկատմամբ

ԵՐԵՎԱՆ, 12 ԱՊՐԻԼ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ. ՀՀ Մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի փոխնախարար Ալեքսան Ավետիսյանը օրերս հրաման է արձակել արգելված դեղամիջոցներ օգտագործող մարզիկների նկատմամբ նոր զենամիջոցներ կիրառելու մասին: Ըստ այդ հրամանի, արգելված դեղամիջոցներ օգտագործած մարզիկները կոռակարգկվեն ցմահ, իսկ նրանց մարզիչները կզրկվեն մարզական իրավունքից: Այն մարզական կազմակերպությունները, որոնց մարզիկները կօգտագործեն արգելված դեղամիջոցներ, կզրկվեն մարզական միջոցառումներին մասնակցելու իրավունքից: Հրամանում ասված է, որ Հայաստանի հակադոպինգային ծառայության ՀԱՕԿ-ի բժշկական հանձնաժողովը այսուհետ իրավունք ունի առանց մարզիկին նախազգուշացնելու ցանկացած ժամկետներում հանդուգնության ազգային հավաքական թիմի անդամների մոտ անցկացնել հակադոպինգային ստուգում և արդյունքների մասին տեղեկացնել նախարարությանը:

ՇԱՀԿ

Լևոն Բաբուջյանը մայրաքաղաքի չեմպիոն

ԵՐԵՎԱՆ, 12 ԱՊՐԻԼ, ՓՍՍՏ. Ավարտվեց միջազգային շահկի մայրաքաղաքի տղամարդկանց առաջնությունը: Մրցաշարի հաղթող դարձավ Լևոն Բաբուջյանը, որը 11 հնարավորից վաստակեց 9.5 միավոր: Ուշագրավ է, որ Բաբուջյանն առաջին անգամ լուսաբեր վարպետության թեկնածուի նորման: Տղամարդկանց դասյարին յուրալի միջազգային Անահիտ Վանյանը, որը 8.5 միավորով զբաղեցրեց 2-րդ տեղը: Ի դեպ այս երկու շահիստներն էլ հայտնի մասնագետ ԽՍՀՄ նախկին չեմպիոնուհի Նոնա Վարդանյանի սաներն են: Բաբուջյանը և 3-րդ տեղ գրաված Վահան Օհանյանը (8 միավոր) իրավունք են նվաճել մասնակցելու ՀՀ առաջնությանը:

Անմազ ոտքեր

Շատերը զարմանում են, որ հեծանվորդների ոտքերն անմազ են: Այս մարզածեւի ներկայացուցիչները ստիպված են սափրել իրենց ոտքերը կամ քաշել մազերը, քանի որ դրանք խանգարում են մերամանը:

Անդրե Աղասու «հանձարեղ» հայտարարությունը

«Օլիմպիական խաղերը, օլիմպիական խաղեր են», հայտարարեց Անդրե Աղասին Ըստ մասնագետների, դրանով աշխարհահռչակ թենիսիստն ուզում էր հասկացնել, որ մտադիր է մասնակցել Ատլանտայի օլիմպիական խաղերին:

Ռենոյի աշխարհի առաջնությունը Պետերբուրգում

ԵՐԵՎԱՆ, 12 ԱՊՐԻԼ, ՓՍՍՏ. Մայիսի 27-ից մայիսի 6-ը Ռուսաստանի հյուսիսային մայրաքաղաքում կանցկացվի ռենոյի տղամարդկանց աշխարհի թիմային առաջնությունը: Այս մրցաշարում Հայաստանը կներկայացնեն գրոսմայստեր Էդուարդ Ռսկանյանը, սպորտի վարպետներ Ներսես Գրիգորյանը և Արմեն Ստեփանյանը, վարպետության թեկնածուներ Հարություն Մազմանյանն ու Մհեր Մանուկյանը, ինչպես նաև թիմի խաղացող ավագ մարզիչ, գրոսմայստեր Ալբերտ Պողոսյանը: Ի դեպ, նա մարզածեւի նամակագրությամբ անցկացվող առաջնության աշխարհի չեմպիոնն է:

ԲՈՆՅԱՔՍՄԱՐՏ

Մոհամեդ Ալին Տեոֆիլո Սթիվենսոնի հյուր

Նրանք երբեք ռինգում չհանդիպեցին իրար հետ, քանի որ Մոհամեդ Ալին Քլեյը, որոշեսիոնալ բոքսիստ էր, իսկ օլիմպիական խաղերի բազմակի չեմպիոն Կուբայի Տեոֆիլո Սթիվենսոնը՝ ոչ որոշեսիոնալ: 70-ական թվականներին նրանք աշխարհում ծանր քաշի ուժեղագույն բոքսիստներն էին: Բայց Մոհամեդ Ալին և Տեոֆիլո Սթիվենսոնը, այնուամենայնիվ, վերջերս հանդիպեցին իրար: Մոհամեդ Ալին հրավիրել էր Կուբայի սպորտի նախարարը նույն ինքը Տեոֆիլո Սթիվենսոնը: Մոհամեդ Ալին իր հետ Կուբա էր բերել մի քանի տասնյակ կկլոդրամ դեղորայք փոքրիկների բուժման համար:

ՖՈՒՏԲՈԼ

Եվրոպական երկրների ազգային առաջնություններում

Պորտուգալիա

29-րդ տուր

«Տիրսենսե»-«Շավեշ»	2-1
«Ամարոզա»-«Սպորտինգ»	1-1
«Լեյրիա»-«Բուավիստա»	1-0
«Բենֆիկա»-«Բրագա»	3-0
«Ֆելգեյրաս»-«Բելենենսես»	0-0
«Գիմարաես»-«Ժիլ Վիսենսե»	2-0
«Սալգեյրուս»-«Լեսա»	3-0
«Ֆարենսե»-«Կամոդիանոյորենս.»	3-1
«Մարիտիմու»-«Պորտո»	1-1

Մրցաշարային աղյուսակը 29 տուրից հետո

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Պորտո	29	23	5	1	74-14	74
2. Բենֆիկա	29	19	6	4	49-25	73
3. Սպորտինգ	29	15	9	5	58-24	54
4. Բուավիստա	29	16	6	7	50-25	54
5. Գիմարաես	29	16	5	8	47-29	53
6. Բելենենսես	29	13	8	8	45-26	47
7. Բրագա	29	11	7	11	37-41	40
8. Լեյրիա	29	12	4	13	32-44	40
9. Մարիտիմու	29	11	6	12	35-43	39
10. Սալգեյրուս	29	7	14	8	36-37	35
11. Ժիլ Վիսենսե	29	8	8	13	27-43	32
12. Լեսա	29	8	6	15	25-43	30
13. Ֆելգեյրաս	29	7	8	14	26-43	29
14. Ամարոզա	29	5	13	11	28-44	28
15. Ֆարենսե	29	8	3	18	30-43	27
16. Տիրսենսե	29	6	9	14	23-42	27
17. Շավեշ	29	6	7	16	31-48	25
18. Կամոդիանոյոր.	29	7	2	20	24-63	23

Անգլիա

34-րդ տուր

«Մանչեսթ. Ս.»-«Մանչեսթ. Ս.»	3-2
«Նյուքասլ»-«Քուինզ Պ.Ռ.»	2-1
«Ջովենթրի»-«Լիվերպուլ»	1-0
«Աստոն Վիլլա»-«Չելսի»	2-1
«Արսենալ»-«Լիդս»	2-1
«Էվերտոն»-«Բոլտոն»	3-0
«Նոթինգհեմ»-«Տոտենհեմ»	2-1
«Սաութհեմպ.»-«Բլեքբուրն»	1-0
«Վեստ Հեմ»-«Ուիմբլդոն»	1-1
«Միդլսբրո»-«Շեֆիլդ»	2-1

Հետաձգված խաղեր

«Լիվերպուլ»-«Նյուքասլ»	4-3
«Լիդս»-«Սաութհեմպ.»	1-0

Մրցաշարային աղյուսակը 34 տուրից հետո

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Մանչեսթր Ս.	33	21	7	5	62-32	70
2. Նյուքասլ	32	21	4	7	60-33	67
3. Լիվերպուլ	33	18	8	7	64-31	62
4. Աստոն Վիլլա	33	17	8	8	48-31	59
5. Արսենալ	33	16	9	8	46-29	57
6. Էվերտոն	34	15	9	10	56-38	54
7. Տոտենհեմ	33	15	9	9	44-34	54
8. Նոթինգհեմ	32	13	11	8	42-42	50
9. Բլեքբուրն	33	14	6	13	47-40	48
10. Վեստ Հեմ	33	13	7	13	40-45	46
11. Չելսի	33	11	12	10	38-37	45
12. Լիդս	32	12	6	14	37-45	42
13. Միդլսբրո	34	11	9	14	33-43	42
14. Շեֆիլդ	33	9	8	16	44-54	35
15. Ուիմբլդոն	33	8	10	15	48-64	34
16. Սաութհեմպ.	33	7	10	16	30-47	31
17. Մանչեսթր Ս.	34	7	10	17	29-53	31
18. Քովենթրի	33	6	12	15	39-59	30
19. Քուինզ Պ.Ռ.	34	7	6	21	32-52	27
20. Բոլտոն	34	7	5	22	36-66	26

Առաջնության ամբարկուները

Ս. Շիրեա («Բլեքբուրն»)	28
Ֆաուլեր («Լիվերպուլ»)	27
Ֆերդինանդ («Նյուքասլ»)	26
Յորկ («Աստոն Վիլա»)	16
Շերինգամ («Տոտենհեմ»)	

ԳԵՂԱՍՍԱՀՔ

Բոնալիի անհաջողության պատճառը մայրն է

ԳԵՈՐԳ ԱՌԵՐՈՅԱՆ

Վալենսիա, Իսպանիա

5 անգամ եվրոդայի չեմպիոն, 3 անգամ աշխարհի փոխչեմպիոն ֆրանսիացի սեւամորթ գեղասահորդուհի Սուրիա Բոնալին հավանաբար երբեք չկարողանա դառնալ աշխարհի չեմպիոն: Էդմոնտոնում տեղի ունեցած աշխարհի վերջին առաջնությունում գրաված 5-րդ տեղը վկայում է, որ նրա մարզական կյանքի մայրամուտը ինչո՞ւ Սուրիա Բոնալին չկարողացավ դառնալ աշխարհի չեմպիոնուհի: Հաստեր համար սա գաղտնիք չէ: Բոլորը մասնաբնում են նրա խորթ մորը Սյուզանին, որը որդեգրել է Սուրիային: Մայրը միշտ իսկել է աղջկան, պարտադրելով մարզիչներին իր անձնական տեսակետը դասավանդելու Սուրիա Բոնալիին: Դա խանգարել է տաղանդավոր աղջկա տեխնիկական կատարելությանը: Սուրիա Բոնալին այսօր գեղասահիում լինելով աշխարհի լավագույններից մեկը, չկարողացավ իր անձնական ոճը հաղորդել մարզածեւին: Նա օրական մարզվում է 7 ժամ: Խորթ մայրը պահանջում է, որ աղջիկն անընդհատ աշխատի: Դրան հակազդում է Ֆրանսիայի հավաքականի ղեկ եւ մարզիչ Դիդիե Գայակեն, քանի որ այս մարզածեւում պետք է հավասարակշռություն կյանքի մեջ: Շատից ավելի մարզվելը, հատկապես երիտասարդ աղջիկների համար, կարող է վնասակար դառնալ: Քանի որ մոր եւ աղջկա կյանքերը շատ սերտ են, ուստի պրոֆեսիոնալ մարզիչ տեղ չի մնացել: Այսպիսով, Սուրիա Բոնալին իր բնատուր լավ հատկանիշներով դասարդվեց երկրորդական դերի: 1992 թվականին Բարսելոնում տեղի ունեցած օլիմպիական խաղերից հետո, որտեղ Սուրիա Բոնալին անհաջողության մատնվեց, մայրը՝ Սյուզան Բոնալին, պահանջեց, որ աղջկան չմարզի Դիդիե Գայակեն: Դրանից հետո շատ մարզիչներ մարզեցին Սուրիա Բոնալիին: Նրանց թվում են Անդրե Բրունեն, Ֆրանկ Կարոլը, Ալեն Ժիլետին, նույնիսկ նախկին ԽՍՀՄ անվանի գեղասահորդուհի, աշխարհի, եվրոդայի եւ օլիմպիական խաղերի բազմակի չեմպիոնուհի Իրինա Ռոդնինան: Բոլորը եկան եւ գնացին: Գնացին դուռը զարկելով, չհանդուրժելով Սուրիա Բոնալիի մոր ամեն գործի մեջ խառնվելու բնավորությունը: Մինչ տարեց տարի այս մարզածեւում ուրիշներն ավելի են կատարելագործվում, Սուրիա Բոնալին ետ-ետ է գնում: Ըստ մոտիկ մարդկանց, Սուրիայի մայրը հոգաս է իր աղջկա համար: Նա ուզում է, որ Սուրիան մարզածեւում ամեն մի դժվարություն հաղթահարի: Սուրիայի ձախողությունները նման մտածելակերպի արդյունք են: Այսօր գեղասահիի աշխարհ են եկել երիտասարդ եւ շատ ուժեղ մարզիկներ: Սուրիա Բոնալին իր մոր ճնշող ազդեցության տակ լցիտի, թե ինչու իր ճանապարհը այսպես դժվար է դարձել:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Օրվա հետքերով

ՍԵՐԳԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ

Լիբանանը դարձյալ թշնամության ասպարեզ

Լ[illegible] նանի քաղաքացիական [illegible] տարվա ավարտից հետո [illegible] երկրի բոլոր զինված խմբավորումները զինաթափվեցին, բացի «Հեզբոլլահից», որն այժմ վերահսկում է Հարավային Լիբանանի մեծ մասը: Իսրայելը հինգշաբթի օրը հարձակում գործեցով Քեյրոթի վրա որտեղ ստորագրում հայտարարում է, որ Լիբանանի հարավային մասը դարձել է «ոչնչության գոտի» [illegible] ու չի վերահսկվում Լիբանանի իշխանությունների կողմից: Հանդիպումը Իսրայելի զորքերը 1982 թվականին [illegible] խորտակեցին Լիբանան ու հասան մինչև Բեյրութ: Լիբանանցիները, սակայն, մերժում են Իսրայելի այդ դիրքորոշումը: Լիբանանի արտգործնախարար Ֆարես Բուեյզը հինգշաբթի օրն այցելեց հայտարարությամբ հանդես եկավ. «Այդ տարածքը փաստորեն ռմբակոծության է ենթարկվել զորքերի ու տարածաշրջանում խաղաղության դեմ: Լիբանանը բացարձակ խնդրել է իսրայելցիներին դադարեցնել հարձակումները, որ նրանք իրենց զորքերը Լիբանանի գրավյալ տարածքներից դուրս բերեն միջազգայնորեն ճանաչված սահմաններից այն կողմ, այնպես, որ այդ տարածքում հնարավոր լինի Լիբանանյան զինված ուժեր տեղակայել: Երբ իսրայելցիները կանեն այդ, մենք էլ մեր կողմից կկարողանանք խաղաղության երաշխավորել այդ շրջանում»:

Վերջին 2 տարում Իսրայելը ղեկավարում էր Միացյալ Նահանգների միջնորդությամբ ձեռք բերված համաձայնությունները. «Հեզբոլլահը» չի գրոհի Իսրայելի տարածքում գտնվող նպատակակետերի վրա, իսկ Իսրայելը չի հարձակվի քաղաքացիական օբյեկտների վրա: Ասկայն երկուշաբթի օրը, երբ Հարավային Լիբանանում ակաթի դիրքերից մի դեռահաս զոհվեց և մի քանի հոգի վիրավորվեցին, «Հեզբոլլահը» դրանում մեղադրեց Իսրայելի հեռախուզությունը, թե հեռակառավարվող ականն է դրյալեցրել: Իսրայելն իր հերթին հայտարարեց, որ ինքը ոչնչի մասին տեղյակ չէ եւ որ երեխաներն ըստ երեւույթին տուժել են, երբ խաղացել են ականի հետ: Իսրայելի իշխանությունները, համենայն դեպս, երկրի հյուսիսում տագնաղ էին հայտարարել ու բնակչությունը զգուշացրել էր նկուղներում ու ռմբաքաղաքներում: Եվ ճիշտ էր վարվել: «Հեզբոլլահի» «Գրադ» կայանքներից կատարված հրթռակոծությունից ոչ մի մարդ չզոհվեց, միայն տասնյակ վիրավորներ եղան, չնայած որ իսրայելական Քիրյաթ-Շմոնա քաղաքում հրթիռը մի տան վրա էր ընկել, որտեղ բարեբախտաբար մարդ չկար:

Իսկ հինգշաբթի առավոտյան Իսրայելի ուղղաթիռները հրթռակոծեցին Բեյրութում գտնվող «Հեզբոլլահի» մի գրասենյակ, որտեղ Իսրայելցիների կարծիքով «Հեզբոլլահի» «մտավոր կենտրոնն» էր գտնվում: Այսինքն, Լիբանանը նորից դարձավ տարածաշրջանի ռազմությունների թշնամության ասպարեզն ու, ըստ երեւույթին, դեռ է մոտակա ապագա մնալ սնունդ գոտի դառնալու իր երազանքը: Իր հերթին, Սիրիան, որը վերահսկում է Լիբանանի տարածքի մի մասը, հաշվի առնելով վերջին օրերի իրադարձությունները Իսրայելի ու Թուրքիայի միջեւ ձեռք բերված համաձայնությունը 2 երկրների օդային տարածքներն այդ երկրների ռազմական օդանավերի կողմից համատեղ օգտագործման մասին, ամերիկացիների կողմից Հեղբոլլահի ռազմական հենակետերն օգտագործելու հնարավորության մասին համաձայնությունը եւ Իսրայելի գրոհը Լիբանանի վրա) իրեն թշնամական օղակի մեջ զգա:

Իսկ Իսրայելի ժողովուրդը, որին գլ վեցրել է ռմբաղաքաստաններում ու նկուղներում գիշերելն ու ամեն ինչից վախենալը (դրագրոնը քիկում են, որ մարդիկ վախենում են նույնիսկ երեխաներին մենք դուրս բերելուց), կարող է հիասթափվել այժմյան իշխանություններից, որոնք արաբների հետ խաղաղության բանակցություններ են վարում, չհավատալ այսօրվա վարչապետի «Իսրայելն ուժեղ է Պերեսի օրոք» նախընտրական կարգախոսին ու ձայն տալ բանակցություններին դեմ հանդես եկող «Լիկուդ» կուսակցության ղեկավարներին, որոնց մեջ այնքիսի գործիչներ կան, ինչպես Ա. Շարոնը, որն ի տարբերություն Շիմոն Պերեսի, անտարակույս հասարակության կարծիքը, 13 տարի առաջ իսրայելական զորքերի Լիբանան ներխուժելու հրաման էր արձակել:

ԳՐԻԳՈՐ ԷՄԻԼ-ՏԵՐՅԱՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

Հունաստանի ԱԳ նախարարը հանդիպում է դաշինքը Սիրիայի հետ

Թուրքական հետաքննության հաղորդման համաձայն, Հունաստանի արտգործնախարար Թեոդորոս Պանգալոսը հայտարարեց, որ «այսօրվա դրությամբ Թուրքիայի հետ բարեկամական հարաբերություններ հաստատելու ոչ մի հնարավորություն գոյություն չունի»: Պանգալոսը ամերիկյան «Վաշինգտոն թայմս» լրագրին տված հարցազրույցում ընդգծել է, որ 2 երկրների միջեւ երկար ժամանակ շարունակվող ոչ բնականոն հարաբերությունները կարող են բարելավվել միայն այն դեպքում, երբ Թուրքիան հրաժարվի Էգեյան ծովի կարգավիճակի վերաբերյալ իրավունքներից, եւ կամ էլ հարցը Հաագայի միջազգային դատարանում քննարկելու պայմաններում: Հարցազրույցում նշվում է, որ չնայած Հունաստանը ՆԱՏՕ-ի անդամ է, բայցեւայնպես ձգտում է Սիրիայի հետ ռազմական դաշինք կնքել: Պանգալոսը, զարգացնելով իր միտքը, հայտարարել է. «Մենք Սիրիայի հետ ինչո՞ւ չդաշնակցենք: Այս հարցում մենք ոչ մեկից ներողություն խնդրելու մտադրություն չունենք: Միջազգային գրեթե բոլոր հարցերում մենք Սիրիայի հետ դաշնակիցներ ենք»:

Գ. Ղ.

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

3 սենյականոց բնակարան Երեբունու Շուկայի մոտ, քարե շենքի 5/5, բարվոք վիճակում:

Հեռախոս 55-75-77
ժամը 18-ից հետո:

ԱԶԳ

Օրաթերթի համակարգչային ծառայությանը կարող եք դիմել



Գովազդների
Բրոշյուրների
Լոգոտիպերի
Անցաթղթերի
Կնիքների
Բլանկների
Հրավիրատոմսերի
Ֆիրմային ոճի
Օրացույցների
Այցեստոմսերի
Բուկլետների
Գրքերի
ձեւավորում

Աշխատանքները կկատարվեն
Apple Macintosh, LaserMaster 1200 համակարգով

ՉԳՈՒՇԱՑԵՔ
ԴԻՖԹԵՐԻԱՅԻ
ՎԱՐԱԿ ԿԱ



Այդ վարակից
միակ ապահով
պաշտպանությանը միջոցը
ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆ Է

Համաձայն ՀՀ առողջապահության նախարարի հրամանի հանրապետության ողջ բնակչությանը (բոլոր տարիքային խմբերին) առաջարկվում է պատվաստվել դիֆթերիայի դեմ:

Դիմեք Ձեր տեղամասային պոլիկլինիկանները, որոնք USAID կազմակերպության աջակցությամբ ապահովված են պատվաստանյութով և միանվագ սրսկիչներով:

Ինչո՞ւ պատվաստվել վաղը, եթե կարելի է այսօր:

«ԱՐԱՅ» - JVC-ի Պաշտոնական ներկայացուցիչ

1 տարվա երաշխիք JVC մակնիշակիր բոլոր ապրանքներին

Անվճար տեղեկություններ Հայաստանում գործող ձեռնարկությունների առաքարկի եւ պահանջարկի մասին հեռախոսով: Զանգահարել 589167, 581351 «Սփյուռ»:

«Գարգեռանի» հրատարակչության տպարան, Երեւան-23, Արտակնյաց 2. Գրանցման թիվ 65. Գրանցիչ 69149. Պատվեր 2083. Տպաքանակը 3000. Ստորագրված է տպագրության 12.04.1996. Գինը 75 դրամ

digitised by A.R.A.R.@